Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

36(502)
31.12.2017
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Համո ՍԱՀՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՀԵՏ ՆՈՐԱՆԱԼՈՎ

Հրաժեշտի ու հանդիպման
Երանելի մի ակնթարթ…
Ջրը՞նգ , զրը՞նգ,- ծոր է տալիս
Ժամացույցի զանգը հանդարտ:
Սեղանների վրա թողած
Իր օրինությունն ու իր բարին,
Հարազատի հոժարությամբ
Հեռանում է հոգնած տարին:
Մանուկ տարին իր սպիտակ
Խանձարուրից աչքը բանում,
Ուրախություն, ուրախություն,
Ուրախություն է խոստանում:
Ուրախանանք նոր տարու հետ -
Նոր տարու հետ նորանալով,
Հին հոգսի հետ մեր քունքերի
Ճերմակն անգամ մոռանալով…
Եկեք մաղթենք-այսպես կանգնած
Սեղանների շուրջը հարուստ -
Գնացողին՝ բարի ճամփա
Ու եկողին՝ բարի գալուստ:
Խմենք կենացն այս նոր տարու,
Մի քիչ բացվենք ու արթնանանք,
Տխրությունը միշտ կը լինի,
Այսօր մի լավ ուրախանանք,
Մեր սրտերում ուրախության
Կրակն այնպես թող ճարճատի,
Որ ծիծաղներ ծաղկին՝ ծալ-ծալ
Ակոսներում մեր ճակատի:
Ուրախանանք նոր տարու հետ,
Նոր տարու հետ նորանալով,
Դալարելո՛վ մեր կյանքն ապրենք,
Ոչ թե՝ դանդաղ չորանալով…
Խաղաղություն մաղթենք հողին,
Մաղթենք՝ ամեն սար ու ձորում
Բողբոջներին բացվելու բախտ
Եվ ծիլերին՝ հասկավորում:
Սիրողներին մաքուր սիրո
Հավատ մաղթենք մի հաստատուն,
Իմաստունին կորով մաղթենք,
Եվ կտրիճին՝ իմաստություն:
Մերձավորին՝ վստահություն,
Մեծավորին՝ ներող հոգի,
Բարուն ազատ թեւեր մաղթենք
Եվ բարություն՝ ամեն ոքի:
Բոլոր մարդկանց մաղթենք՝ իրար
Ջերմացնող մի ջերմություն,
Մի մտերիմ, մի մտերիմ,
Մի մտերիմ մտերմություն:
Ուրախանանք նոր տարու հետ -
Նոր տարու հետ նորանալով,
Մեզ ավելի լավ ճանաչենք,
Մեր հոգու մեջ խորանալով…
Եկեք խմենք մեր այս միակ,
Անկրկնելի կյանքի կենաց,
Մեր ձեռքերի ճարտարության
Ու մեր արդար ջանքի կենաց,
Այս նոր տարվա առաջին ծյան
Եվ առաջին ծաղկի կենաց …
Ձարկենք թասերն ու դատարկենք
Մեր այս սեղան-սինու կենաց,
Քանի գինին մեզ չի խմել,
Խմենք նաեւ գինու կենաց…
Մեր սրտերում ուրախության
Կրակն այնպես թող ճարճատի,
Որ էլ հոգսի հետք չմնա
Կնճիռներում մեր ճակատի:
Ուրախանանք նոր տարու հետ -
Նոր տարու հետ զորանալով
Շտկենք սապատն այս աշխարհի,
Թեկուզ մի քիչ կորանալով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ հայրենակիցներ

Եկել է պահը՝ հրաժեշտ տալու 2017 թվականին եւ դիմավորելու նոր՝ 2018 թվականը:

Անցնող տարին եղել է բավականին հագեցած, հարուստ տարբեր իրադարձություններով ու ձեռքբերումներով:

2017 թվականին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունվեց Արցախի Հանրապետության նոր Սահմանադրությունը: Բարեփոխումներ իրականացվեցին կառավարման համակարգում, որոնց նպատակն է ավելի արդյունավետ դարձնել կառավարման ոլորտը, ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, ընդլայնել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

Մեր երկրում կառուցվեցին նոր կրթօջախներ, առողջապահական հաստատություններ, բնակելի շենքեր, տարբեր ենթակառուցվածքներ: Հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնվեց ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղին, որը դարձել է Արցախը Մայր Հայաստանին եւ աշխարհին կապող հիմնական շնչերակներից մեկը:

Ունեցանք ձեռքբերումներ բազմաթիվ այլ ոլորտներում, սակայն շատ են նաեւ անելիքները:

Գալիք տարում նախատեսում ենք իրականացնել տարաբնույթ ծրագրեր տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում՝ ուղղված մեր բնակչության բարեկեցության մակարդակի շարունակական բարձրացմանը, սոցիալական պայմանների հետեւողական բարելավմանը:

Իհարկե, շարունակելու ենք առանձնակի ուշադրություն դարձնել պաշտպանության եւ բանակաշինության ոլորտներին: Հզոր եւ մարտունակ բանակը մեր հանրապետության ու ժողովրդի անվտանգության եւ բնականոն զարգացման ամենակարեւոր գրավականն է, եւ այսուհետ էլ արվելու է հնարավորը մեր զինված ուժերի մարտունակության աստիճանը բարձր պահելու, բանակը ժամանակակից զինտեխնիկայով հագեցնելու ուղղությամբ:

2018 թվականին տոնելու ենք Արցախյան շարժման 30-րդ տարեդարձը, Հայաստանի առաջին հանրապետության հռչակման եւ 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի 100-ամյակները: Մենք ոչ միայն պարտավոր ենք նշել այդ տոները եւ հիշել հերոսներին, այլ նաեւ հետեւել մեր նվիրյալների պատգամներին, զորացնել ու զարգացնել մեր անկախ եւ ազատ երկիրը, հանուն որի իրենց կյանքն են զոհաբերել հայ ժողովրդի լավագույն զավակները:

Հավե՛րժ փառք ու պատիվ բոլոր մարտիրոսներին:

Թանկագի՛ն բարեկամներ

Այս պահին բոլորս ունենք ջերմ ու նվիրական ցանկություններ: Բնական է, որ առաջին հերթին ուզում ենք, որ նոր տարում լինի խաղաղություն, որ մեր երեխաները, հարազատներն ու մերձավորները լինեն առողջ ու երջանիկ, տարեցները՝ ապահով ու անհոգ:

Ուզում եմ շնորհավորել մեր երկրի սահմաններն անսասան պահող բոլոր քաջորդիներին՝ գեներալից մինչեւ շարքային: Թող նրանք պատվով եւ անփորձանք կատարեն հայրենիքի պաշտպանի իրենց պարտականությունները:

Շնորհավորում եմ ողջ հայ ժողովրդին, մեր բոլոր հայրենակիցներին Արցախում, Մայր Հայաստանում եւ Սփյուռքում: Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, հաջողություններ ու ամենայն բարիք:

Թող գալիք՝ 2018 թվականը լինի նոր ձեռքբերումների ու հաղթանակների տարի մեր երկրի, ժողովրդի եւ յուրաքանչյուր ընտանիքի ու քաղաքացու համար:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Արցախի Հանրապետության Նախագահի նստավայրում դեկտեմբերի 28-ին տեղի է ունեցել 2017 թվականին միջազգային եւ հայրենական հարթակներում փայլուն արդյունքներ արձանագրած Արցախի մարզիկների պարգեւատրման հանդիսավոր միջոցառումը, որի ընթացքում նրանք արժանացել են դրամական խրախուսման:

Երկրի ղեկավարը 2017 թվականը բնութագրել է որպես մեր հանրապետության համար սպորտի բնագավառում լուրջ ձեռքբերումների տարի, ինչի մասին են վկայում արցախցի մարզիկների հաղթանակներն ու մեդալների նվաճումներն աշխարհի, Եվրոպայի եւ Հայաստանի Հանրապետության առաջնություններում:

«Այսօր մենք կարող ենք փաստել՝ մեր հանրապետությունն ունի ձեւավորված սպորտային դպրոցներ, որոնք պատրաստ են լուծելու իրենց առջեւ դրված խնդիրները: Փոքր Արցախը, իսկապես, իր արժանի տեղը նվաճեց համաշխարհային սպորտի մեջ, եւ մեր հաղթանակները դրա վառ օրինակներից են: Առողջ, ֆիզիկապես ուժեղ, կիրթ, նպատակասլաց եւ հայրենասեր երիտասարդությունը մեր ժողովրդի հպարտությունն ու պարծանքն է, մեր երկրի եւ պետության հուսալի պաշտպանը, նրա բնականոն զարգացման եւ զորացման ամենամեծ ներուժը»,- ընդգծել է իր ելույթում Բակո Սահակյանը:

Նախագահ Սահակյանը մաղթել է բոլոր պարգեւատրվածներին նորանոր հաջողություններ՝ հավելելով, որ այն ուշադրությունը, որը դարձվում է պետության կողմից մեր երկրում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացմանը, այսուհետ եւս կկրի մշտական եւ շարունակական բնույթ:

Տե՛ս նաև՝ 2-րդ էջ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Նախագահ Բակո Սահակյանը դեկտեմբերի 30-ին մասնակցել է «Ապագա սերունդների հիմնադրամ»-ի կողմից հանրապետության գյուղական բնակավայրերից ժամանած երեխաների համար մայրաքաղաք Ստեփանակերտում կազմակերպված Ամանորի տոնական միջոցառմանը:

Երկրի ղեկավարն արժեքավոր նվերներ է հանձնել երեխաներին, շնորհավորել նրանց Նոր տարին եւ մաղթել խաղաղություն, քաջառողջություն, ուրախ ու երջանիկ կյանք:

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂՈՒՄ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը դեկտեմբերի 31-ին այցելել է Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղ եւ ներկա գտնվել այնտեղ կազմակերպված ամանորյա տոնական միջոցառմանը:

Երկրի ղեկավարը շնորհավորել է բոլորին Ամանորի եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղություն, առողջություն, երջանկություն եւ ամենայն բարիք:

Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐՑԱԽ-2017

ԵՐԿԻՐԸ ՀԱՆԱՁՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՍՊՈՐՏՈՎ

Դեկտեմբերի 29-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ 2017թ. արդյունքներով լավագույն ցուցանիշներ արձանագրած մարզիկների պարգևատրման արարողություն: Նախարար Նարինե Աղաբալյանը հայրենական մրցահարթակներում սպորտի տարբեր ձևերից բարձր տեղեր նվաճած շուրջ երեք տասնյակ մարզիկների ու նրանց մարզիչներին հանձնեց դրամական պարգևներ:

Շնորհավորելով նրանց՝ նախարարը վստահություն հայտնեց, որ նրանցից շատերին կտեսնի աշխարհի առաջնություններում բարձունքների հասած, քանզի Հայաստանի Հանրապետության առաջնություններին մասնակցությունը այն ցատկահարթակն է, որը հնարավորություն է ստեղծում ավելի բարձր ցուցանիշներ արձանագրել հետագայում և լավ մար-

զավիճակում լինել: Դրան, անշուշտ, կնպաստի մարզիկների համառ, քրտնաջան, նպատակասլաց աշխատանքը ու նաև այն քաղաքականությունը, որ իրականացվում է մեր հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ: Ն. Աղաբալյանն ընդգծեց հատկապես վերջին տարիներին մարզաշխարհում նկատվող մեծ աշխուժությունը. տարեցտարի ավելանում է խրախուսման ներկայացվող մարզիկների թիվը, ինչպես նաև՝ նոր մարզաձևեր: Նա վստահեցրեց, որ պետության ու նախարարության կողմից կշարունակվեն այդ աշխատանքները, որպեսզի մարզվելու համար ստեղծվեն ավելի նպաստավոր պայմաններ:

Նախարարի փաստմամբ՝ 2017-ին արցախցի մարզիկներն իրենց մարզիչների հետ միասին աշխարհի ավելի քան 30 երկրներում մասնակցել են տարբեր առաջնությունների և մրցումների, արձանագրել բարձր ցուցանիշներ: 30-ից ավելի երկրներում ծածանել են հայկական երկու հանրապետությունների պետական դրոշները: «Սա ճանապարհ է դեպի Արցախի Հանրապետության ճանաչում, որովհետև երկիրը ճանաչում են ոչ միայն սահմաններով, այլև նրանով, թե այդ սահմանների ներսում ինչ արժեհամակարգով է ապրում ժողովուրդը, ինչպիսի քաղաքակրթություն է ներկայացնում և ինչ արդյունքներ արձանագրում: Եվ ամեն անգամ հնչեցնելով Արցախի Հանրապետության անունը ՀՀ-ում և աշխարհի տարբեր երկրներում, մենք քայլ առա քայլ մոտեցնում ենք նրա ճանաչման օրը»,- ասաց Ն. Աղաբալյանը: Նա տեղեկացրեց, որ 2018-ին Ստեփանակերտում կբացվի նոր մարզասրահ, իսկ նախկին «Օկտյաբր» կինոթատրոնի տեղում կառուցվում է մարզամշակութային համալիր: Սա նշանակում է, որ Արցախում կկազմակերպվեն միջազգային մրցաշարեր, ինչը նույնպես հնարավորություն կտա, որ մարզաշխարհի ներկայացուցիչները ճանաչեն մեր երկիրը, հավելեց նախարարը:

Հանդիպման վերջում Նարինե Աղաբալյանը շնորհավորեց ներկաներին Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ, մաղթեց, որ 2018 թվականը լինի խաղաղության տարի, բոլորի ընտանիքներում լինի սեր, ջերմություն և բարեկեցություն:

ԱԿՏԻՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԻ

Հարցազրույց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի սպորտի վարչության պետ, սամբոյի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի կրկնակի չեմպիոն, աշխարհի գավաթակիր, սպորտի վաստակավոր վարպետ ***Աշոտ ՂԱՆԻԵԼՅԱՆԻ*** *հետ:*

- Պարոն Դանիելյան, ինչպիսի՞ն էր մարզական տարին Արցախի համար:

- 2017-ին Արցախի մարզիկները մասնակցել են աշխարհի 8, Եվրոպայի՝ 23 առաջնությունների, աշխարհի 25 մրցաշարերի, ՀՀ 59, ԼՂՀ 12 առաջնությունների, ուսումնամարզական 15 հավաքների, ինչպես նաև՝ մարզչական և դատավորների 5 սեմինարպարապմունքների, որպեսզի միջազգային մրցաշարերում նաև արցախցի դատավորներ լինեն: Այս թվարկածները բոլորն էլ հանդես են եկել Հայաստանի դրոշի ներքո մի պարզ պատճառով:

Այս տարի ունեցել ենք աշխարհի մեկ չեմպիոն՝ Արթուր Առուշանյան, ընդ որում՝ նա արդեն երկրորդ անգամ է աշխարհի չեմպիոն դառնում և Հայաստանում ու Անդրկովկասում միակ մարզիկն է, որը կիոկուշին կարատե մարզաձևում երկու անգամ աշխարհի չեմպիոն է հռչակվել:

Աշխարհի առաջնություններից ունեցել ենք 2 արծաթե, 7 բրոնզե մեդալ, Եվրոպայի առաջնություններից՝ վեց 1-ին, երեք 2-րդ, 13 3-րդ տեղ, միջազգային մրցաշարերում՝ 24 առաջին, 21՝ երկրորդ, 25՝ երրորդ տեղ, Հայաստանի առաջնություններում՝ 75 առաջին, 60 2-րդ, 56 3-րդ տեղ:

- Մի քանի խոսք՝ ֆեդերացիաների մասին:

- Արցախում գործում են 20-ից ավելի ֆեդերացիաներ, որոնք աջակցություն են ստանում պետության կողմից: Այս տարիներին ավելացել է նաև ծանրամարտի ֆեդերացիան, որը շատ կարևոր է մեր մարզաշխարհի համար, քանի որ ծանրամարտը Հայաստանում բավականին հանրաճանաչ մարզաձև է, և շատ մեծ արդյունքներ են գրանցվում, ու մեծ ցանկություն կա, որ Արցախում էլ այդ մարզաձևը զարգանա: 2018թ. այս ֆեդերացիան նույնպես պետության կողմից կֆինանսավորվի:

Ներկայում այդ նպատակով ֆեդերացիայի կողմից վերանորոգվում է Շուշիի մարզադահլիճը, իսկ Ստեփանակերտում՝ բարերար Վլադիմիր Ավագյանի ֆինանսավորմամբ: Ծանրամարտիկները մի քանի ամսվա ընթացքում մասնակցել են մրցաշարերի, և ելնելով 5-6 ամսվա պարապմունքներից՝ կարող ենք ասել, որ բավականին լավ ցուցանիշների են հասել:

Շատ շուտով կբացվի ըմբշամարտի մարզադահլիճը մայրաքաղաքի Հին Արմենավան թաղամասում: Գորգն արդեն տեղադրված է, շուտով կսկսվեն պարապմունքները: Անչափ կարևոր է քաղաքի ծայրամասում որևէ մարզաձևով նման կառույց ունենալը, որպեսզի այդ թաղամասի երեխաների համար հնարավորություն ստեղծվի զբաղվել ինչ-որ մարզաձևով:

-Ունե՞ք թվական տվյալներ, թե բնակչության քանի տոկոսն է զբաղվում սպորտով, կարո՞ղ ենք խոսել մեր հանրապետությունում սպորտի զանգվածային լինելու մասին:

- Ընդհանուր առմամբ, շուրջ 25 հազար մարդ ակտիվ մարզական կյանք է վարում: Բոլոր շրջաններում գործում են մարզադպրոցներ, որոնք իրենց մասնաճյուղերն ունեն գյուղերում: Ստեփանակերտում կա 4 մարզադպրոց: Դրանցում ընդգրկված է շուրջ 10 հազար հոգի, հիմնականում 8-16 տարեկան երեխաներ են: Մարզադպրոցներից բացի կան անհատ պարապողներ: Սրանցից զատ, կան մեծահասակներ, որոնք մասնակցում են Եվրոպայի, աշխարհի առաջնություններին: Նրանք մարզադպրոցից դուրս են պարապում: Ասվածին գումարենք նաև սպորտը և ֆիզկուլտուրան հանրակրթական դպրոցում:

Սպորտի մասսայականությունը տարեցտարի աճում է, բայց դեռ շատ անելիքներ ունենք, որ ֆիզկուլտուրան և սպորտը մտնեն ցանկացած մարդու կենցաղ և ընտանիք, դառնան առօրյայի մաս: Այդ ուղղությամբ աշխատանքներ տանում ենք, իհարկե: Դրա համար ունենք զանգվածային միջոցառումներ, որոնք ուղղված են ընտանիքներին, դեռահասներին՝ «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն նախադպրոցական հիմնարկ», դպրոցականներին՝ 1-3-րդ, 4-7-րդ, 8-12-րդցիների համար մարզական սպարտակիադաներ (բասկետբոլ հանդբոլ, թեթև աթլետիկա, հնգամարտ): Նման միջոցառումները խթանում են սպորտի մասսայականացումը:

- Գաղտնիք չէ, որ սպորտի մասսայականացման առաջին պայմանը հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ պայմանների ստեղծումն է՝ մարզադահլիճներ, մարզագույք. ինչպիսի՞ն է վիճակն այդ առումով:

- Չի կարելի ասել, թե բոլոր դպրոցներն ունեն մարզադահլիճ կամ լիարժեք ապահովված են անհրաժեշտ պայմաններով, բայց կասեի, որ մեծ դպրոցներում դրանք առկա են: Այդ մարզադահլիճներից օգտվում են նաև մեր մարզադպրոցների խմբերը: Մեր մարզական ենթակառուցվածքը, կարելի է ասել, շատ թույլ է. մեծ աշխատանքներ են տարվում բարելավման ուղղությամբ՝ նոր մարզադահլիճներ բացվեն, ու հանրակրթական դպրոցների դահլիճներն ազատվեն այդ ծանրաբեռնվածությունից:

Մարզագույք ամեն տարի ձեռք է բերվում: Նորերս էլ ստացանք Մոսկվայից՝ ռուսաստանաբնակ հայերի կողմից, շուտով մարզագույք կստանանք սամբո, բոքս մարզաձևերի համար:

- Սպորտի մասսայականացմանը հավանաբար նպաստում են նաև մեր չեմպիոնները:

- Անշուշտ: Տեսնելով, որ տարբեր մարզաձևերից չեմպիոններ ունենք, հենց ծնողներն են ուզում, որ իրենց երեխան ինչ-որ մարզաձևով զբաղվի, որ կոփված լինի, ֆիզիկապես՝ ամուր և վաղը բանակում կարողանա հեշտ հաղթահարել դժվարությունները: Լավ լիցք է տալիս մարզիկներին նաև պետության կողմից խրախուսվելը. ամեն տարեվերջի մեր երկրի Նախագահը նյութական խոշոր պարգևներ է տալիս այն մարզիկներին, որոնք մրցանակային տեղ են գրավել Աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի առաջնություններում: Հենց թեկուզ գումարային առումով համեմատելու դեպքում կնկատենք առաջընթացը: Ամեն տարի մարզիկների քանակն այդ առումով մեծանում է: Ամբողջ աշխարհում շատ մարզիկներ մեծ գումարներ են վաստակում: Մեր երկրում էլ է այդպես: Այդ առումով, կարելի է ասել, ողջ բեռը դրված է պետության վրա:

- Ի՞նչ նոր ծրագրեր ունեք նոր տարում:

- 2017-ի բոլոր ծրագրերն իրականացրել ենք, վերջինը եղել է Կիոկուշին կարատեի աշխարհի առաջնությունը, և ինչպես տեսաք, մարզական տարին եզրափակեցինք աշխարհի չեմպիոնով, հույս ունենք, որ 2018-ն էլ կբացենք լավ արդյունքներով: Նոր տարվանից նոր մրցաշրջան կսկսենք, սկզբում՝ ԼՂՀ, հետո՝ ՀՀ առաջնություններ, և այդպես առաջ կգնանք: Մեծ ցանկություն ունենք մարմնամարզությանը զարկ տալու: Մարզիչների պակասի և համապատասխան դահլիճ չունենալու պատճառով այդ գեղեցիկ մարզաձևը մեզ մոտ դեռ չկա: Բայց մենք աշխատելու ենք այդ ուղղությամբ, քանի որ մարմնամարզությունը բոլոր մարզաձևերի հիմքն է: Դա շատ թանկ արժեցող մարզաձև է. մարզագույքը ձեռք բերելու համար մեծ գումարներ են հարկավոր ու նաև առանձին դահլիճ: Դրա պահանջարկը մեծ է: Շատ ծնողներ են ցանկանում, որ իրենց երեխան զբաղվի մարմնամարզությամբ, մանավանդ որ այդ մարզաձևով հենց փոքրուց են սկսում պարապել: Իմ՝ որպես այս կառույցի ղեկավարի, երազանքն է Արցախում ունենալ մարմնամարզական դպրոց:

- Արցախը ոչ միայն մասնակցում է միջազգային մրցաշարերի, այլև ինքն էլ կազմակերպում է միջազգային մրցաշարեր...

- Առաջին անգամ այս տարի անցկացրինք Նելսոն Ստեփանյանի հիշատակին նվիրված միջազգային մրցաշար և ուզում ենք շարունակական դարձնել: 2018-ին նախատեսում ենք բասկետբոլի միջազգային մրցաշար կազմակերպել: Կձգտենք միջազգային մրցաշարերում հանդես գալ Արցախի դրոշի ներքո: Այս վերջին մրցաշարին ես հետևում էի. Աբխազիան, լինելով մեր կարգավիճակում, իր դրոշի ներքո մասնակցեց աշխարհի առաջնությանը: Միգուցե մրցաշարը Ռուսաստանում էր անցկացվում, դրա համար հաջողվեց, բոլոր դեպքերում պետք է փորձել:

- Ձեր մաղթանքը Ամանորի կապակցությամբ:

- Արցախ աշխարհին՝ նորանոր հաղթանակներ, մեր մարզիկներին, մարզիչներին՝ մեծ հաջողություններ, եղած հաջողությունները բազմապատկվեն, և կարևորը՝ խաղաղություն լինի մեր երկրում, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա զբաղվել իր գործով ու նաև՝ որևէ մարզաձևով:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄՈՒԱՅ ԹԱՅ ՄԱՐՏԱՌՃՈՎ

Արցախի մարտարվեստների ասոցիացիայի նախագահ Գարեգին Աղաբալյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 17-ին անցկացվեց արդեն ավանդույթ դարձած՝ Արցախի մուայ թայի գավաթի բաց առաջնություն, որին մասնակցեց 138 մարզիկ: Մարզիկները ներկայացնում էին ինչպես Ստեփանակերտը եւ Քարվաճառը, այնպես էլ Երեւանը, Էջմիածինը, Արմավիրը, Մա-սիսը, Արմավիրի շրջանի Լեռնագոգ գյուղը:

Տարբեր քաշային կարգերում մենամարտի դուրս եկած մարզիկները ցուցադրեցին համառ, անզիջում մրցապայքար: Ակնհայտ են մուայ թայով պարապող մարզիկների առավելությունները. բազմակողմանիորեն զարգացնող եւ համախմբված պարապմունքները, որոնք ընկած են մուայ թայով զբաղվող ցանկացած մարզիկի նախապատրաստման հիմքում, թույլ են տալիս հասնել այնպիսի ֆիզիկական կեցվածքի, որը կարող է անհնարը դարձնել հնարավոր: Միաժամանակ օգտագործելով ոտքերը, ծնկները, բռունցքներն ու արմունկները՝ մուայ թայի մարտիկը հակառակորդին է ուղղում հարվածների տարափ, ինչի շնորհիվ

կասեցնում է նրա ցանկացած շարժում:

Մարտից առաջ մարզիկների կողմից կատարվող ավանդական արարողակարգը թայլանդական երաժշտության ներքո միջոցառմանը հաղորդում էր յուրահատուկ գունագեղություն, իսկ ցուցաբերված մարտական տեխնիկան եւ մարզիկների ոգու հզորությունը անտարբեր չէին կարող թողնել ներկա գտնվող հյուրերին, երկրպագուներին, մարզասերներին:

Ինչքան հաճախակի են կազմակերպվում նմանատիպ առաջնությունները, այնքան ավելի ակնառու են դառնում մարզիկների հաջողությունները: Առաջնությանը մասնակցելը մարզիկին անփոխարինելի փորձ եւ նոր հմտություններ է տալիս, ինչն անմիջական ազդեցություն է ունենում նրա հետագա մարզական ուղու վրա:

Մրցանակային առաջին, երկրորդ, երրորդ տեղեր զբաղեցնող մարզիկների համար նախատեսվել էին մեդալների, գավաթների եւ պատվոգրերի տեսքով պարգեւատրություն, իսկ լավագույն տեխնիկա, լավագույն մենամարտ ունեցած մարզիկների համար՝ հատուկ պատվոգրեր:

Արցախում մարզաձեւի զարգացման եւ մասսայականացման գործընթացում անգնահատելի ներդրում ունի Արցախի մարտարվեստների ասոցիացիայի պատվավոր նախագահ Գրիգորի Գաբրիելյանցը, որին ասոցիացիայի կողմից շնորհվեց շնորհակալագիր: Առանձնահատուկ շնորհակալության արժանացան նաեւ Կոմիտաս Կարապետյանը, ասոցիացիայի այլ աջակիցներ:

Առաջնության գլխավոր մրցավար Գարեգին Աղաբալյանը նշեց, որ ընդհանուր առմամբ գոհ է մարզիկների ցուցաբերած արդյունքներից: Հուրախություն բոլորի՝ մուայ թայը Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) կողմից 2016 թվականին ընդունվել է որպես օլիմպիական մարզաձեւ: Լավագույն արդյունքներ ցուցաբերող մարզիկները հնարավորություն կունենան մասնակցել նաեւ օլիմպիական մրցումների:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը տարեվերջին անցկացրեց ընդլայնված խորհրդակցություն Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Պաշտոնավարման անցած երեք ամիսներին Ն. Աղաբալյանը նման հանդիպումներ է ունեցել շրջաններում, առանձին ուսումնական հաստատություններում: Տարեվերջյան այս հանդիպումը յուրատեսակ ամփոփում էր անցած ժամանակաընթացքում նրա կողմից կատարված կրթական դաշտի ուսումնասիրության: Նախարարը ներկայացրեց իր դիտարկումները ոլորտի խնդիրների, սպասվող փոփոխությունների, հանրակրթության ոլորտում իրականացվելիք պետական քաղաքականության մասին:

Նրա տեղեկատվությամբ՝ կրթության ոլորտը կանգնած է մեծ փոփոխությունների շեմին՝ թելադրված ամբողջ աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պահանջներով: Ըստ նրա՝ մեր կրթության ձևը և բովանդակությունը պետք է համապատասխանեցվեն այս հարափոփոխ, ինտենսիվ փոփոխությունների շրջանում ներկայացվող պահանջներին: Կրթության որակի փոփոխության համար պահանջվող նոր չափորոշիչները յուրաքանչյուրից պահանջում են հասկանալ իր անելիքները: Այդ առումով շատ կարևորվում է տնօրենների դերակատարությունը, քանի որ փոփոխությունները հենց նրանց միջոցով պետք է իրականացվեն: Եվ որպեսզի ընդհանուր պատկերացում լինի, թե ինչ խնդիրներ կան, Ն. Աղաբալյանը ներկայացրեց մի քանի թվեր հանրակրթությունից: Այսօր մեր պետությունը իր միջոցներից ավելի քան 14 մլրդ դրամ հատկացնում է կրթության ոլորտին, որի առյուծի բաժինը՝ շուրջ 10 մլրդ, ուղղվում է հանրակրթությանը: Կրթությանն ուղղվող միջոցները կազմում են ՀՆԱ-ի 5 տոկոսից ավելին, որը բարձր ցուցանիշ է՝ համեմատած ՀՀ-ի հետ: Հանրապետությունում կա 216 դպրոց, որտեղ սովորում է շուրջ 23200 աշակերտ: Մեկ աշակերտին ընկնող միջին գումարը կազմում է 400 հազար դրամից ավելի, այն դեպքում, երբ ՀՀ-ում այդ թիվը չի գերազանցում 150 հազարը: «Եթե մենք ունենայինք շատ լավ արդյունքներ կրթության և հատկապես հանրակրթության ոլորտում, գուցե արդարացված լինեն այդ ծախսերը, բայց քանի որ նաև մեր խնդիրներն են անհամեմատ շատ, նշանակում է՝ ինչ-որ բան ինչ-որ տեղ այնպես չենք անում և իրականում բարեփոխումների խնդիր ունենք»,- ասաց նա և տեղեկացրեց, որ որոշ չափով փոխելու են մարտավարությունը կրթության ոլորտում: Շեշտադրումն արվելու է ավելի մեծ քանակություն ունեցող դպրոցների և ռազմավարական կետերի վրա, որպեսզի կրթության որակի բարելավման անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար ծախսերը հասանելի լինեն ավելի մեծ թվով աշակերտների: Առաջին հերթին պետք է դպրոցների օպտիմալացման ծրագիր իրականացվի՝ կապված դրանց ծանրաբեռնվածության հետ: Կոնկրետ մայրաքաղաքում, որտեղ կենտրոնացված է հանրապետության աշակերտության 1/3 մասը, կան գերծանրաբեռնված դպրոցներ: Որոշ գյուղական բնակավայրերում էլ՝ հակառակը, առկա են թերծանրաբեռնված դպրոցներ: Թե ինչպես պիտի իրականացվի օպտիմալացումը, նախարարն ասաց, որ պատրաստ են լսել մանկավարժական հանրույթի, շահագրգիռ մարմինների և առհասարակ, հասարակության կարծիքը, առաջարկությունները:

Ըստ նրա՝ նախարարության կողմից մշակված տարբեր կարգերը, ընդունված տարբեր որոշումներ, ինչպես, ասենք՝ գյուղական բնակավայրեր ուղեգրով գործուղված ուսուցիչներին տրվող արտոնությունները, չեն տալիս սպասված արդյունքը, և պետք է ձեռնարկվեն նոր քայլեր, հետևողականորեն աշխատանքներ իրականացվեն այդ ուղղությամբ:

Կրթության բովանդակության առումով պատրաստ են մասնակցել ՀՀ-ում այս ուղղությամբ սկսված աշխատանքներին: Մասնավորապես, մեծ անելիքներ կան բնագիտական առարկաների, ինչպես նաև լեզուների վրա ուշադրություն սևեռելու ուղղությամբ: Նախատեսվում է ոչ միայն ռուսերենի, այլև անգլերենի, ֆրանսերենի խորացված ուսուցում, քանի որ առանց դրանց իմացության հնարավոր չէ զարգացնել զբոսաշրջության ոլորտը, որը մեր հանրապետությունում հայտարարվել է գերակա ուղղություն: Բացի դրանից, այսօր շատ մեծ տեղ է հատկացվում ինքնակրթությանը, որը նույնպես անհնար է իրականացնել առանց լեզուների իմացության, նշեց նախարարը: Այսօր կարևորվում է ոչ միայն գիտելիքներ տալու, դաստիարակության, այլև կարողությունների ու հմտությունների զարգացման բաղադրիչը: Ուսումնական պլաններում նման հնարավորություններ նախատեսված են, պարզապես հետևողական պետք է լինել այդ հարցում և նպատակային ու ճիշտ օգտագործել, ընդգծեց ԿԳՍ նախարարը:

Արմատապես պետք է փոխվի վերաբերմունքը սովորողների մասնագիտական կողմնորոշման նկատմամբ: Ամեն ինչ պետք է ուղղված լինի երկրի զարգացմանը: Մանկավարժական հանրույթը պետք է լավ պատկերացում ունենա մեր երկրի մասին, թե զարգացման ինչ հնարավորություններ կունենա 5, 10 տարի հետո, ինչ մասնագետների պահանջարկ և ըստ այդմ ուղղորդի աշակերտներին: Փորձ կարվի կրթական համակարգին մասնակից անել ներդրումային հաջողված ծրագրեր իրականացնող ձեռներեցներին: Մեր տնտեսության մեջ կան նոր ուղղություններ, որոնք ունեն մասնագետների խնդիր: «Մեր կողմից երիտասարդական դաշտի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գործազրկությունն ավելի շատ պայմանավորված է ոչ թե նրանով, որ աշխատատեղեր չկան, այլ որ համապատասխան մասնագետներ չկան: Իսկ դրա համար հավասարապես պատասխանատու ենք բոլորս՝ և՛ մենք, և՛ ուսուցիչները, և՛ ծնողները, և՛ ընդհանրապես հասարակությունը»,- ասաց նախարարը:

Ն. Աղաբալյանն անդրադարձավ նաև մանկավարժի գործին:

Ոչ բոլոր ուսուցիչներն են պարտաճանաչ և բարեխղճորեն կատարում իրենց աշխատանքը, ուսումնական նյութին հատկացված ժամանակը լիարժեք օգտագործում: Նախարարի համոզմամբ՝ սա տնօրենների անմիջական պատասխանատվության խնդիրն է: Նա տեղեկացրեց, որ նախարարության աշխատառճի մաս է կազմելու դպրոցներում առանց զգուշացնելու ստուգումներ իրականացնելը: Ուսումնական տարվա բոլոր օրերին թող սպասեն նախարարության ներկայացուցիչներին: Շեշտադրումն արվելու է որակյալ մանկավարժների վրա: Ամեն ինչ պետք է արվի, որպեսզի դպրոցում աշխատեն արժանիները, լավագույնները: Այստեղ պիտի բացառվի որևէ մեկի ծանոթությամբ կամ այլ կարգով ուսուցչի ընտրությունը: Ն. Աղաբալյանը տեղեկացրեց, որ խստագույնս կարձագանքեն բոլոր այն դեպքերին, երբ տեսնեն, որ այդ կարգը խախտվում է:

Նախարարի համոզմամբ՝ դպրոցը պետք է ուժեղացնել, համալրել կարող մասնագետներով: Ըստ նրա՝ մասնագետների պակասը կարելի է լրացնել՝ օգտվելով կրթական տարբեր ծրագրերից, մասնավորապես, այսօր գործում է «Դասավանդիր Հայաստան» միջազգային ծրագիրը, որը մասնագետներ է ուղարկում դպրոցներ: Կներդրվեն կրթական տեխնոլոգիաներ, ինչը հնարավորություն կստեղծի հեռավար ուսուցման համար: Ուսուցիչները պիտի կարողանան աշխատել ժամանակակից տեխնոլոգիաներով: Եթե նրանք իրենց վրա չաշխատեն և չսովորեն, լուրջ խնդիրներ կունենան: Նախարարը տեղեկացրեց, որ այդ առումով իրականացնելու են տարբեր դասընթացներ ու ծրագրեր և մասնակից են անելու ուսուցիչներին, բայց տնօրենները պետք է առաջարկեն այնպիսի ուսուցիչների, որոնք ի վիճակի են սովորել և մյուսներին սովորեցնել:

Խնդիրներ կան ներառական կրթության մասով՝ դարձյալ կապված մասնագետների հետ:

Լաբորատորիաների մասին: Այսօր շատ դպրոցներից այդ խնդիրն առաջադրվում է, որ լաբորատորիաները հագեցած չեն համապատասխան սարքերով ու նյութերով, ու չեն կարողանում լիարժեք այդ դասերը կազմակերպել: Ն. Աղաբալյանի դիտարկմամբ՝ երբեմն դա կապված չէ կոնկրետ սարքերի կամ նյութերի հետ, որքան որ՝ զուտ կազմակերպչական աշխատանքների, որովհետև երբեմն դպրոցներում ականատես ենք լինում, որ նույն լաբորատորիաներում կան սարքեր, որոնք այդպես էլ չեն օգտագործվում: Նախարարն ընդգծեց, որ նման բան չպիտի թույլ տրվի, որովհետև ամեն նման խնդիր լուծելու համար ստիպված են լինում փնտրել, գտնել հովանավորներ, միջոցներ հատկացնել այս կամ այն խնդիրը լուծելու համար: Այսպես օրինակ՝ տարիներ առաջ «Փյունիկ» հիմնադրամի կողմից ձեռք բերվեցին և դպրոցներին հանձնվեցին լաբորատորիների կոմպլեկտներ, բայց դիտարկում անելու դեպքում կպարզվի, որ դպրոցների մեծ մասում չեն օգտագործվում այդ սարքերն ու նյութերը: Նախարարի խոսքով՝ որպեսզի այս իրավիճակը նորից չկրկնվի, հարցը կուսումնասիրեն ըստ անհրաժեշտության՝ պարտադրելով տրվող նյութերի ճիշտ օգտագործում:

Ն. Աղաբալյանն անդրադարձավ նաև դպրոցներում նկատվող դրամահավաքությանը. այս թեման այդպես էլ չի սպառվում: Այդ առումով նա մատնանշեց այն երևույթը, երբ ժամանակ առ ժամանակ, նախարարությանը չտեղեկացնելով, ինչ-որ կազմակերպություններ կամ անձինք մտնում են դպրոցներ և իրենց ծառայություններն առաջարկում: Նախարարի դիրքորոշումը կոշտ է այդ հարցում. խստիվ արգելվում են նման բաները, ինչպես նաև տարբեր բուհերի կողմից դպրոց մտնելը և աշակերտների շրջանում քարոզչություն անելը: Մասնագիտական կողմնորոշում՝ չի նշանակում դպրոցի դռները բաց թողնել բոլորի առջև, որ գան ու փորձեն աշակերտներին կողմնորոշել, կարծում է նախարարը: Նա տեղեկացրեց, որ իրենց կողմից միջոցներ են ձեռնարկվելու՝ մեկ հարթակի վրա ներկայացնելու ինչպես մեր հանրապետության, այնպես էլ ՀՀ կրթական հնարավորությունները, որպեսզի աշակերտները և ծնողներն այլընտրանք ունենան, այսինքն՝ համեմատության մեջ տեսնեն: Նախարարի խոսքով՝ բոլոր շրջաններից բերելու են աշակերտների՝ ծանոթացնելու «Թումո» կենտրոնի, Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի, Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի հետ, այդ ուղղությամբ կողմնորոշելու աշակերտներին:

Ն. Աղաբալյանը տնօրեններին կոչ արեց հավուր պատշաճի դպրոցները նախապատրաստել Ղարաբաղյան շարժման 30-ամյակին: Այդ ուղղությամբ ևս հսկայական աշխատանքներ կան կատարելու, նշեց նա: Գաղտնիք չէ, որ մեր մատաղ սերնդի մեծ մասը չի տիրապետում մեր նորօրյա պատմությանը: Այստեղ լուրջ անելիքներ ունենք բոլորս և առավել շատ պատմության ուսուցիչները՝ մեր գոյապայքարի պատմությունը ներկայացնելու առումով: Դպրոցներում կազմակերպել տարբեր միջոցառումներ, մրցույթներ ու այդ մասին նախապես տեղյակ պահել նախարարությանը, որպեսզի վերջինիս կողմից կազմվի ժամանակացույց և ապահովվի լուսաբանումը: Լավագույն միջոցառումները կխրախուսվեն նախարարության կողմից: Ն. Աղաբալյանը առաջարկեց նաև ֆոտոցուցահանդեսներ կազմակերպել. տեսողական ինֆորմացիան այսօր շատ մեծ դերակատարություն ունի: Ընդհանրապես յուրաքանչյուր տոնակատարության նպատակը նաև արխիվային, փաստավավերագրական նյութերի հավաքումն է: Պիտի փորձել նաև այդ ձևով ներգործել, այդ կերպ տեղեկություններ տալ մեր երեխաներին, առաջարկեց նախարարը:

Խորհրդակցությունը եզրափակվեց Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ նախարարի շնորհավորանքով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Գալդ բարի, 2018

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Դեկտեմբերի 25-ին Իշխանաձորի գյուղական համայնքում կայացավ Ամանորի տոնական ցերեկույթ, որը կազմակերպվել էր Քաշաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության բաժնի, Իշխանաձորի համայնքապետարանի և Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի կողմից: Գյուղի խաչմերուկ-շրջադարձում կանգնեցված տոնածառի մոտ էին հավաքվել Իշխանաձորի բոլոր փոքրիկները՝ շուրջ 200 երեխա, ծնողներ, ուսուցիչներ, հյուրեր: Իշխանաձորցիների տոնին մասնակից եղան նաև Բերձորի «Բերձոր» ժողգործիքների համույթի երգիչ-երաժիշտները, պետական մանկապարտեզի ներկայացուցիչները: Սկզբում պարային կատարումներով ներկաներին ողջունեցին Բերձորի արվեստի դպրոցի պարարվեստի բաժնի Իշխանաձորի խմբակի սաները: Խմբակը գործում է այս տարվա սեպտեմբերից՝ Անահիտ Ասոյանի ղեկավարությամբ և արդեն հանդես է գալիս հաջողությամբ: Շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը ողջունեց ներկաներին, շնորհավորեց գալիք տոների առթիվ: Ազգագրական, ժողովրդական, գուսանական երգերի կատարումներով հանդես եկան «Բերձոր» համույթի երգիչները: Պարային կատարումներին մասնակցեցին թե՛ փոքրիկնե-

ր և թե՛ ավագները: Այնուհետև երեխաների կանչով տոնածառին մոտեցան Ձմեռ պապն ու Ձյունանուշը, և հանդեսն ավելի ուրախ ու աշխույժ դարձավ: Պարելով փոքրիկների հետ՝ Ձմեռ պապն ու Ձյունանուշը նվերներ բաժանեցին երեխաներին, մաղթեցին բարին, որ բոլորի երազանքներն իրականանան Նոր տարում: Ցերեկույթին ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հայաստանյան և արցախյան մասնաճյուղերի տնօրեններ Ռաֆֆի Դուդակյանն ու Էդիկ Գրիգորյանը, որոնք նույն օրը մասնակցեցին իրենց կողմից կառուցված մեկ առանձնատան և Իշխանաձորի բուժկետի հիմնանորոգված շենքի բացման արարողություններին: Ամանորյա հանդեսից հետո Իշխանաձորի Ազատամարտիկների թաղամասում նոր կառուցված հանդիսության սրահում կայացավ տոնական խնջույք-միջոցառում՝ տարածքի ազատամարտիկների մասնակցությամբ: Միջոցառմանը մասնակցող ազատամարտիկները հավաստիացրին, որ միշտ պատրաստ են պաշտպան կանգնելու հայրենի երկրին, ինչպես դա եղավ 2016-ի ապրիլին: Նույն օրը Երիցվանքի Մ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի բակը նույնպես տոնական էր: Համայնքի ղեկավարության և դպրոցի ուսուցչական անձնակազմի կողմից կազմակերպվել էր Սուրբ Ծննդյան և Ամանորին նվիրված հանդես-ցերեկույթ՝ համայնքի բնակչության, հատկապես երեխաների մասնակցությամբ: Դպրոցի աշակերտները, Ձմեռ պապն ու Ձյունանուշը միասին իրականացրին տոնը: Իրենց ավագ ընկերներից ետ չմնացին նաև նախադպրոցական երեխաները և Ձմեռ պապի կողմից ստացան նվերներ: Երիցվանքի համայնքը բաղկացած է 3 բնակավայրից՝ Երիցվանք, Կրմեն և Ամիրյան, փռված է Հակարիի՝ Արաքսին միավորվելու հատվածում՝ գետի աջափնյա հարթություններում: Համայնքի ղեկավար Զարգանդ Միքայելյանը տեղեկացրեց, որ համայնքում ընդհանուր բնակվում է 87 ընտանիք՝ 377 բնակչով: Դպրոցում սովորում է 56 աշակերտ, նրանցից 12 հոգի գալիս են Ամիրյանից, և այդքանը՝ Կրմենից: Առաջին դասարանում սովորում է 8 աշակերտ: Հավելեց նաև, որ դեկտեմբերի 31-ին Ձմեռ պապը կայցելի բոլոր փոքրիկներին ու նվերներ կբաժանի համայնքի վարելահողերը վարձակալածների կողմից:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԴԵՊԻ ՇԱՐԺՈՒՄ-30

ՀԱՂԹԵՑ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

«Աշակերտ-ուսանող-զինվոր. միասնության ուժը» շարժումը, սկզբնավորվելով Արցախի մայր բուհում և թափ առնելով հանրապետության շրջաններում, իր գագաթնակետին հասավ ԱրՊՀ-ում, որտեղ տեղի ունեցավ գլխավոր «մարտը»: Մասնակցում էին՝ Ստեփանակերտից՝ Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի «Բռեյն սթոն», Ասկերանի շրջանից՝ Ասկերանի էդ. Բարսեղյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի «Ռեստարտ», Մարտունուց՝ Խնուշինակի «Հայդուկ», Շուշից՝ քաղաքի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոցի «Ակորդ», Մարտակերտից՝ շրջկենտրոնի Վ. Բալայանի անվան հ, 1 դպրոցի «Տրիումֆ», Քաշաթաղից՝ Բերձորի հ. 1 դպրոցի «ԱՍՍԱԼԱ», Շահումյանից՝ Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգի «Քարվաճառ», Հադրութից՝ Տողի դպրոցի «Տողասար», ՊԲ-ից՝ «Հայոց բանակ» ջոկատները:

Մրցելույթներին հետևելու էին եկել ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ռեկտոր Մանուշ Մինասյանը, Արցախյան շարժման նվիրյալներ:

Խոսքը ինտելեկտուալ խաղմրցույթի մասին է, որը շուրջ երեք ամսվա ընթացքում գլխավոր կազմակերպիչների՝ ԱրՊՀ ուսանողական խորհրդի կողմից անցկացվել է հանրապետության բոլոր շրջաններում, և հաղթողները ներկայացել էին եզրափակիչ փուլին: Մասնակիցները նախ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին՝ Արցախյան գոյապայքարում զոհված ուսանողների հիշատակին կառուցված հուշաքարին ծաղիկներ խոնարհելով:

Ծրագրի ղեկավար՝ ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանն իր խոսքում նշեց, որ այն նախաձեռնվել է ուսանողների ուժերով և ընդգրկել ԱՀ գրեթե ողջ տարածքը, տևել մոտ 3 ամիս: Ապահովված է եղել բացառիկ մասսայականացումը. ծրագրի իրականացմանը մասնակցել են 250 ուսանող, հանրակրթական դպրոցների 50 թիմ, շուրջ 400 աշակերտ: Մասնակիցները եղել են ՊԲ զորամասերում, ներկայացրել մշակութային ծրագրեր, կազմակերպել երթեր դեպի Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկներին նվիրված հուշակոթողներ, մաքրման և բարեկարգման աշխատանքներ իրականացրել Քարվաճառի ճանապարհին, Դադիվանքի համալիրում, Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցում, Տանկ հուշարձանի շրջակա տարածքներում, ԱրՊՀ դասախոսները դասախոսություններով հանդես են եկել շրջանների դպրոցներում, կազմակերպվել են տասնյակ հանդիպումներ կրթության շրջանային ղեկավարների, ուսուցչական, աշակերտական կոլեկտիվների հետ, բարեգործական ակցիա Բերձորի գիշերօթիկ հաստատության երեխաների համար՝ ներկայացնելով զվարճալի ծրագիր և հանձնելով նվերներ: Այս ամենն իրականացնելու համար մշտական կապի մեջ են եղել ՊԲ հրամանատարության, ԿԳՍՆ պատասխանատու աշխատողների հետ: Իրենց շահագրգիռ մասնակցությամբ ծրագրին նպաստել են պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, օժանդակել են համալսարանի վարչական և օժանդակ մասի աշխատակիցները:

Եվ քանի որ ծրագրի գլխավոր նպատակը գիտելիքի փոխանցումն էր, կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր:

Պատահական չէր ընտրվել Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված այս միջոցառման եզրափակիչ վայրը. Ղարաբաղյան շարժման սկզբնական օրերին բուհը, որն այն ժամանակ մանկավարժական ինստիտուտ էր, դարձել էր համաժողովրդական պայքարի գիտական հիմնավորման օջախ: 88-ին սկսված ուսանողական շարժումները ևս նպաստել են, որպեսզի Մայր Հայաստանի հետ արցախահայության միավորման արդարացի պահանջը վերածվի համաժողովրդական շարժման:

Աժ Նախագահ Ա. Ղուլյանը դրվատեց ազատության և Շարժման գաղափարները նման ձևով երիտասարդներին փոխանցելու մայր բուհի մտահղացումը, որտեղից 88-ին արցախյան ազգային -ազատագրական պայքարի ալիքը հասավ հրապարակ և Շարժումը դարձավ համաժողովրդական:

Այդ օրերին բուհում տեղի ունեցած շարժումներից, մասնավորապես իր հայտարարած հացադուլի մասին դրվագ ներկայացրեց Արցախյան շարժման առաջամարտիկ, բուհի դասախոս Համլետ Գրիգորյանը:

Այնուհետև բեմահարթակը տրամադրվեց ինտելեկտուալ խաղի թիմերին: ՊԲ թիմի մասնակցությունը մրցույթից դուրս էր: Երեք փուլից բաղկացած մրցույթում միավորների քանակով առաջին տեղն զբաղեցրեց Ասկերանի շրջանը ներկայացնող՝ շրջկենտրոնի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը, որն էլ արժանացավ գլխավոր՝ «ԱրՊՀ ռեկտորի գավաթ» մրցանակին: Բայց ընդհանրության մեջ հաղթողը մեկ թիմ չէր, այլ միասնության ուժը:

Միջոցառումից հետո ծրագրի բոլոր մասնակիցները Արցախի 25-մետրանոց դրոշը ծածանելով՝ երթ կազմակերպեցին դեպի Վերածննդի հրապարակ, որտեղ տեղի են ունեցել հայ ժողովրդի 20-րդ հարյուրամյակի դարակազմիկ իրադարձությունները: Երթի մասնակիցներին հրապարակում աղավնիներով դիմավորել են զինվորները՝ խորհրդանշելով, որ մեր զինվորն է ապահովում երկրի խաղաղությունը, և խաղաղության հերթափոխը շարունակում են նոր եկող սերունդները: Սա է մեր գոյատևման առհավատչյան:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ուրախ Նոր տարի

ԵՐԱՉԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Երկնային Տիրոջ զորությամբ տարին ամփոփեցինք խաղաղության ու լույսի շղարշներով ոսկեզօծված օրերով՝ հակառակ ապրիլյան քառօրյա պատերազմի սարսափների. արդեն անցյալում են այդ օրերի մեր ապրած տխուր հիշողությունները: Ամանորը հրաշալի տոն է, որ կապված է ամենավառ հույսերի ու երազանքների իրականացման հետ: Այն կախարդական է, խորհրդավոր, զարմանալի, անկրկնելի ու հմայիչ: Բոլորս սպասում ենք մի լուսավոր հեքիաթի, նոր երջանկության...

Շնորհավորում եմ բոլորին՝ Նոր տարվա առթիվ, մաղթում Ամանորի բարի հեքիաթներ: Թող մարդկային կյանքը արժանավորվի այս նոր տարում և գնահատվի ըստ արժանվույն: Թող այս հին տարին վանի բոլորից տխրություններն ու դժվարությունները: Իսկ նոր տարին բերի միայն ուրախություն և երջանկություն, լինի առատ և բարեբեր:

Թող հաջողությունը մեզ ուղեկցի ամբողջ տարում ու ողջ կյանքում: Մեր փոքրիկների ամեն մի օրը լինի տոն: Եվ ամենակարևորը՝ Արցախի բոլոր մանուկներն ապրեն խաղաղ ու անամպ երնքի տակ: Թող մանկությունը հասունանա մանկության մեջ՝ խինդի, մանկան քաղցր ծիծաղի ու բարի ժպիտների ուղեկցությամբ:

Մեր դիրքապահ տղաներին՝ բարի ծառայություն ու խաղաղ վերադարձ, նրանց մայրերին՝ ծով համբերություն: Գլուխ խոնարհենք մեր զոհված տղաների շիրիմների առաջ, որոնց արյամբ սրբագործված մեր Արցախում ապրում ու շարունակում ենք արարել:

Նինա ԼԱԶԱՐՅԱՆ
Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի տնօրեն

ԱՌԱՋԻՆ ՁՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹԸ

Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի «Շուշան» խմբի փոքրիկները մեծ խանդավառությամբ ու բերկրանքով ներկայացրին Ամանորի հանդեսը, որը նրանց առաջին միջոցառումն էր: Անթաքույց ու ակներև էին թե՛ երեխաների, թե՛ ծնողների հուզմունքն ու ուրախությունը: Միջոցառումը կազմակերպվել էր մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյանի գլխավորությամբ ու խմբի դաստիարակներ Հասմիկ Հակոբյանի ու Կարինե Պետրոսյանի, երաժշտության ղեկավարներ Իննա Մինասյանի և Անուշ Աբրահամյանի, ֆիզիրահանգիչներ Անուշ Աբրահամյանի ու Նարինե Գրիգորյանի համատեղ ջանքերով:

Անտառի բնակիչները՝ գայլը, աղվեսը, սկյուռը, նապաստակն ու ոզնին, փոքրիկ բեմադրությամբ հյուսեցին Ձմեռային հեքիաթը: Նրանք ընտրեցին անտառի լավագույն եղևնին և զարդարեցին: Աղջիկները ցուցադրեցին «Փաթիլների պարը», որն իրականացվել էր պարուսույց Լուսինե Մելքումյանի ջանքերով:

Վերջում փոքրիկներին հյուրընկալեց Ձմեռ պապը և նրանց բաժանեց երկար սպասված ամանորյա նվերները:

Մաղթենք փոքրիկներին անհոգ ու երջանիկ մանկություն, խաղաղ ու անամպ երկնքի ներքո խանդավառ օրեր:

Հասմիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԵՍ ՆՈՐ ԷՐՔԵՋԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Նոր էրքեջի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ ամանորյա տոնական հանդես: Միջոցառումն անցավ անչափ հետաքրքիր և ուրախ: Հյուրերը մի պահ տեղափոխվել էին հեքիաթների աշխարհ, քանի որ այդ օրը հյուր էին եկել բազմաթիվ հեքիաթների հերոսներ: Հատկապես տպավորիչ էր «Քաջ Նազարը» ներկայացումը: Նազարի և Ուստիանի կերպարները մարմնավորում էին Վրեժ և Լիլիթ Խաչատրյանները, ովքեր այնքան բնական էին խաղում, որ կարծես փոքրիկ դերասաններ լինեին:

Միջոցառմանը մասնակցեցին նաև Երևանից ժամանած մեր հյուրերը՝ տիկին Լենան, Անուշը և Ժեյան: Անուշ Գևորգյանը դպրոցի բոլոր աշակերտներին նվիրեց կոշիկներ և ամանորյա նվերներ: Այս առիթով Նոր էրքեջի մանկավարժական կոլեկտիվի անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել տիկին Անուշին այս ամենը կազմակերպելու համար: Ինչպես նաև մեծ շնորհակալություններ մոսկվահայ բարերարներ Նարինե Դավթյանին, Լուսինե Ղազարյանին, Եվա, Ռուզաննա և Նոնա Միրզաբեկյան քույրերին՝ այս ծրագրին մասնակցելու համար:

Սոֆի ՄԻՍԱԿՅԱՆ
Նոր էրքեջի միջնակարգ դպրոցի ՍԴԱԿ

ԸՆԹԱՑՔ

ԱՐՊՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ժամանակակից աշխարհում հասարակության սրընթաց փոխակերպումների, տեղեկատվական հոսքերի շեշտակի ակտիվացման պայմաններում բարձրացել է բնակչության հոգեկան լարվածության մակարդակը: Այս առումով հոգեկան զարգացման և առողջության պահպանման խնդիրը շատ կարևոր է: Արցախի պետական համալսարանում քանի տարի շրջանառվում է հոգեբանական կենտրոն ունենալու գաղափարը: Այն արդեն իրողություն է: Դեկտեմբերի 19-ին տեղի ունեցավ կենտրոնի պաշտոնական բացումը: Ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, ՊԲ ԱՀՏԱ գծով հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը, ռեկտոր Մանուշ Մինասյանը, հոգեբան մանկավարժներ, հյուրեր Մայր Հայաստանից, ուսանողներ:

Նախարար Ն. Աղաբալյանը հոգեբանական կենտրոնի և վերջերս իրավաբանական կլինիկայի բացումը կարևոր իրադարձություն համարեց համալսարանի կյանքում, քանի որ դրանք մայր բուհում մասնագետների պատրաստման, գիտակրթական ու գիտահետազոտական աշխատանքներում, համագործակցության ծրագրերում նոր մշակույթ են ներդնում: Նրա խոսքով՝ կիրառական հոգեբանությունը մեր հանրապետությունում կայացման փուլում է, և այն, որ հենց այս փուլում Արցախի մայր բուհում ստեղծվում է նման բազային կենտրոն, հուսադրում է, որ մասնագետների պատրաստումը կբարձրացվի որակական նոր աստիճանի: Իսկ հոգեբան մասնագետների պահանջարկն այսօր Արցախում ակնհայտ է. այդպիսի մասնագետների կարիք կա և՛ դպրոցում՝ կապված ներառական կրթության հետ, ու ոչ միայն, և՛ ՊԲ-ում, և՛ հասարակության բոլոր շերտերում: Նախարարը հույս հայտնեց, որ հոգեբանական կենտրոնը մասնագետների պատրաստմանը զուգահեռ կնպաստի նաև այլ խնդիրների լուծմանը:

ՊԲ հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանը նույնպես կարևորեց հոգեբանական կենտրոնի բացումը՝ նշելով, որ պատերազմող երկրի ժողովուրդը և բանակը հոգեբանների կարիք ունեն: Ճիշտ է, մինչ այդ էլ բանակը համագործակցում էր ԱրՊՀ հոգեբանների հետ, բայց և այնպես, մասնագետների կարիք կա:

ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը նշեց, որ հոգեբանական կենտրոնը ծնունդ է ԱրՊՀ, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի և Հայաստանում գործող «Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոնի և բոլոր այն շահագրգիռ կառույցների, որոնք գիտակցում են և կանգնած են այն գաղափարի կողքին, որ Արցախում վաղուց ծառացել է հոգեբանական ծառայություն ունենալու անհրաժշտությունը:

«Ապագա» հոգեբանական կենտրոնի տնօրեն Արմեն Բեջանյանը, ներկայացնելով կենտրոնի բացմանը նախորդած չորսամսյա կազմակերպչական աշխատանքները, որոնց թվում է մասնագետների պատրաստումը, նշեց, որ հաղթահարված են առաջին փուլի դժվարությունները: Կենտրոնին սպասվում են հետաքրքիր գործընթացներ: Նրա գործունեությունը կնպաստի հասարակության տարիքային առանձին խմբերի հետ տարվող աշխատանքներին: Այն կդառնա հոգեբանական խորհրդատվության և աջակցության, առողջական ծրագրերի իրականացման օջախ:

ԱՀ ԿԳՍՆ մասնագիտական կրթության և գիտության բաժնի պետ, հոգեբան Լուսինե Ղարախանյանը, կարևորելով կենտրոնի կիրառական հնարավորությունները, վստահություն հայտնեց, որ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն պայմաններում ապրող մեր բնակչության հոգեկան առողջության հետ կապված խնդիրներն այսուհետ կլուծվեն ոչ թե կարծրատիպային մտածողությամբ, այլ մասնագիտական մոտեցումով:

Հոգեբանության բաժնի ուսանողուհի Արմինե Սևումյանն ընկերների անունից շնորհակալություն հայտնեց համալսարանի ղեկավարությանը և բոլոր աջակցողներին՝ ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացման և հմտությունների ու կարողությունների ձեռքբերմանն ուղղված նման հարթակի ստեղծման համար:

Կենտրոնի բացումն ազդարարող կարմիր ժապավենը կտրելուց հետո ներկաները շրջեցին հոգեբանական կենտրոնի սենյակներով, որոնք առանձնացված են ըստ տարիքային խմբերի: Կենտրոն կարող են հաճախել ոչ միայն հոգեկան խնդիրներ ունեցող երեխաները, այլև բոլորը, որոնք անհրաժեշտություն կունենան իրենց կարիքների, ընդունակությունների գնահատման և ուղղորդման: Փոքր տարիքի երեխաների համար արդեն առկա են անհրաժեշտ գործիքակազմերը: Ա. Բեջանյանը տեղեկացրեց, որ Երևանի իրենց կենտրոնը մշակել է ձեռնարկներ ինչպես երեխաների, այնպես էլ ուսուցիչների, ծնողների համար, և կտրամադրեն Ստեփանակերտի կենտրոնին, շուտով կլինեն ձեռնարկներ նաև սպա հոգեբանների համար: ԿԳՍ նախարարը հետաքրքրվեց՝ կա՞ն գործիքակազմեր, որոնց միջոցով հնարավոր կլինի կանխել երեխաների վտանգավոր վարքի դրսևորումները, կախվածությունը տեղեկատվական միջոցներից: Ա. Բեջանյանը վստահեցրեց, որ կան: Նրա խոսքով՝ մի քանի ամիս անց կենտրոնը կունենա այցելուների մեծ բանակ: Իսկ մանկավարժների համար այն կդառնա մեթոդական կենտրոն:

Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ...

Սերը դեպի հայրենիք քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է:

Նապոլեոն

Հայրենիքին հասցրած վերքը մեզանից յուրաքանչյուրը զգում է իր սրտի խորքում, իսկ լուսավորված ժողովուրդների ճշմարիտ խիզախությունը ինքնազոհաբերման պատրաստակամությունն է հանուն հայրենիքի:

Անցյալը չի՛ մոռացվում, ոչինչ չի՛ մոռացվում: Տարիներ շարունակ նույն հայրենասիրական ոգով ենք դաստիարակում մեր սերունդներին: Հնարավորինս փառքով ենք պսակում մեր սուրբ նահատակների վառ հիշատակը, բարձր գնահատում մեր ազգային հերոսների արժանիքները:

Դեկտեմբերի 14-ին ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Վերինշեն համայնքի Ջ.Ջլավյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ փառքի անկյունի բացումը «Ես ձեր զավակն եմ, ինձ մի՛ մոռացեք» խորագրով՝ նվիրված նախկին Շահումյանի շրջանի Վերինշենում զոհված ազատամարտիկների, ապրիլյան քառօրյա պատերազմում արիաբար զոհված հայորդիների հիշատակին և Արցախի հերոսներին:

Բացման պատիվը տրված էր Շահումյանի շրջվարչակազմի ղեկավար Հ.Մնացականյանին և Նոր Վերինշենի միջնակարգ դպրոցի զինղեկ Հ.Թադևոսյանին: Ներկա էին շրջանի ԿՍ բաժնի վարիչ Խ.Վարդանյանը, Նոր Վերինշեն համայնքի ղեկավար Ս.Մնացականյանը, շեֆ զորամասի սպա Ռ.Մարգարյանը, համայնքի բնակիչներ:

Միջոցառումը ներածական խոսքով բացեց դպրոցի փոխտնօրեն Ա.Միրզախանյանը: Կրթօջախի սաները բանաստեղծություններով, երգ ու պարով ցուցադրեցին հայրենասիրական ոգով դաստիարակված իրենց կերտվածքը: Նրանց ձայնը հնչեղ էր, հայացքը՝ խոսուն, հոգին՝ տոկուն:

Այս բարձրիկ լեռների ծոցում ծվարած գյուղում՝ Նոր Վերինշենում, կրթվում ու դաստիարակվում են աշակերտներ, որոնք քաջ գիտակցում են հայրենիքի քաղցրությունն ու կարևորությունը: Մենք կրկին համոզվեցինք, որ նրանք, մեր մատաղ սերնդի մի փոքրիկ մասնիկը լինելով, միշտ բարձր կպահեն հայրենիքի պատիվը և հանուն հայրենիքի զոհված հայորդիների անմահ անունները:

Միջոցառումն ավարտվեց հյուրերի ելույթներով, Շահումյանի շրջվարչակազմի ղեկավար Հ.Մնացականյանի խրախուսիչ խոսքով:

Ա. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Վերինշենի Ջ.Ջլավյանի անվան միջնակարգ դպրոցի ՍԴՀԱԿ փոխտնօրեն

ՈՐ ԲԱՐԻ ԼԻՆԵՆ ԲՈԼՈՐԸ

Հարգելի խմբագրություն

Ցանկանում եմ ներկայացնել մի անձնավորության, որը տասը տարուց ավելի է, ինչ բարեգործություն է կազմակերպում Նոր Շահումյանի շրջանի համայնքների բնակիչների, դպրոցների, բազմազավակ ընտանիքների համար՝ այդ մարդասիրական և հայրենանվեր գործում ներգրավելով ընկեր-բարեկամների, ծանոթների: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Լոռու մարզի այն բարերարներին, ովքեր դատավոր Բորիկ Գրիգորյանի ուղեկցությամբ այցելել են Շահումյանի շրջանի գրեթե բոլոր համայնքները և բարեգործություն արել:

Յուրաքանչյուր ուսումնական տարի պարբերաբար՝ սեպտեմբերի 1-ին պարոն Գրիգորյանի ուղեկցությամբ Լոռու մարզից համայնքների ղեկավարներ, անհատ ձեռներեցներ, արդարադատության համակարգի աշխատակիցներ այցելում են Շահումյանի շրջանի Չարեքտար, Հավսաթաղ, Զուար, Եղեգնուտ, Քնարավան, Նոր Խարխափուտ, Նոր Ղարաչինար և այլ համայնքների բազմազավակ ընտանիքներին ու դպրոցներ՝ բերելով գրենական պիտույքներ, համակարգիչներ, տպիչներ, հեռուստացույցներ, DVD ձայնարկիչներ, սպորտային գույք, գեղարվեստական գրքեր, հագուստ, սննդամթերք և այլն: Բազմաթիվ են կատարած գործերը, բայց կցանկանայի ներկայացնել վերջին երկուսը:

2017թ. սեպտեմբեր ամսին Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոց պարոն Բորիկ Գրիգորյանի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի կողմից գործուղված ներկայացուցիչները՝ փաստաբան Վրեժ Խաչիկյանի գլխավորությամբ՝ դպրոցի աշակերտներին բերելով գրենական պիտույքներ, պայուսակներ և հագուստ, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Նույն թվականի նոյեմբեր ամսին, պարոն Գրիգորյանի ուղեկցությամբ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Կարեն Հարությունյանի դկողմից և «Հյուսիսային էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Գագիկ Սարգսյանի միջոցներով Հավսաթաղ համայնքի մեկ բազմազավակ ընտանիքի, իսկ Չարեքտար համայնքից՝ երեք բազմազավակ ընտանիքների տրվել են լվացքի մեքենաներ՝ համապատասխան պարագաներով:

Այսօր ցանկանում եմ երախտագիտության խոսք ուղղել Լոռու մարզի բոլոր բարերարներին, որոնք բարեգործական առաքելությամբ այցելել են Շահումյանի շրջանի համայնքներ, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Կարեն Հարությունյանին, «Հյուսիսային էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Գագիկ Սարգսյանին՝ իրենց կատարած հայրենանվեր գործի համար և շնորհավորել բոլորին Ամանորի և Սուրբ Ծնունդի առթիվ՝ ցանկանում ամենայն բարիք, խաղաղություն Հայոց աշխարհին:

Թո՛ղ Աստծո օրհնությունը լինի բոլորի վրա:

Ալվարդ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի մ/դ ուսուցչուհի

200-ԱՄՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՖԵՆՈՄԵՆԸ

2017թ. համաշխարհային մշակութային կյանքի հիշարժան իրադարձությունների շարքում արժանավոր տեղ ունի հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանը:

Մեծ հայի կյանքի և գործունեության մասին գրվել են շատ գրքեր: Նրա մասին հյուսվել են իրական և անիրական պատմություններ: Այվազովսկին ապրել և ստեղծագործել է ռուսական կայսրությունում: Նրա մասին ռուս նշանավոր գեղանկարիչ Ի. Կրամսկոյը գրել է. «Ով ինչ էլ ասի, Այվազովսկին բոլոր դեպքերում առաջին մեծության աստղ է, և ոչ միայն մեզանում, այլև ընդհանրապես արվեստի պատմության մեջ»:

Այվազովսկու հոբելյանին նվիրված ցուցահանդեսներ են բացվել, միջոցառումներ կազմակերպվել Հայաստանում, Ռուսաստանում, Արցախում և այլուր:

Արցախի պետական համալսարանի պատմահրավագիտական ֆակուլտետի կերպարվեստի բաժինը ևս՝ նկարիչ-քանդակագործ Լավրենտ Ղալայանի գլխավորությամբ, մեծարանքի տուրք մատուցեց մեծ նկարչին:

Լ. Ղալայանը ներկայացրեց Հ. Այվազովսկուն որպես անհատականություն, մարդ, նկարիչ, ծովանկարիչ, կոմպոզիցիոն աշխատանքների հեղինակ, որպես մեծ հայ՝ սկսելով նրա սկզբից մինչև կյանքի վերջին օրը:

Ծովանկարչի արմատները Արևմտյան Հայաստանից են: 1700-ական թթ. ավարտին, երբ վերջնականապես ավերվեց Անի քաղաքը, և հայերը ցրվեցին աշխարհով մեկ, Գևորգ (Կոնստանտին) Այվազյանն էլ թողեց հայրենի տունը և տեղափոխվեց սկզբում Լեհաստան, այնուհետև՝ Ղրիմի հայաշատ Թեոդոսիա քաղաքը, որտեղ էլ կառուցեց իր կյանքը Հռիփսիմե անունով աղջկա հետ: Այդտեղ էլ ծնվեցին նրանց Գրիգոր, Գաբրիել, Հովհաննես երեխաները: Գրիգորը գնաց հոր ճանապարհով՝ առևտրի ուղղությամբ, Գաբրիելը՝ հոգևոր և հետագայում հասավ Մխիթարյան միաբանություն, իսկ Հովհաննեսը մնաց ծննդավայրում և ընտրեց նկարչության ճանապարհը: Նա սկզբում ջութակ էր նվագում, ըստ որում՝ այնքան էր տիրապետել, որ նրան արդեն հրավիրում էին համերգների:

Ապագա նկարիչը սկզբում սովորել է տեղի Սուրբ Սարգիս եկեղեցուն առընթեր ծխական դպրոցում: Նրա նկարչական մեծ շնորհքի մասին իմացան տեղի իշխանությունները և առաջ տարան: Այդ մարդկանց անուններն այսօր պատմության մեջ հիշվում են Այվազովսկու շնորհիվ:

Երջանիկ աստղի տակ է ծնվել նկարիչը: Նրա կայացումն անհամեմատ սահուն ու հարթ է անցել. նկատի ունենք հայ մարդու ճակատագիրը: Դրա ամենավառ ապացույցն էր 13 տարեկանում կայսերական ակադեմիայի նրա ուսանող դառնալը պետական հովանավորչության ներքո:

Այվազովսկին վայելել է նաև ժամանակի հայտնի մտավորականների, գրողներ Ժուկովի, Կռիլովի, Պուշկինի, Գոգոլի սերն ու հարգանքը, իհարկե, այդ ամենն իր տաղանդի շնորհիվ: Պարգևները, ոսկե մեդալները գալիս էին մեկը մյուսի ետևից: Այվազովսկին շրջագայեց Եվրոպայում, հարուստ աշխատանքներ ստեղծեց, ցուցահանդեսներ բացեց: Դրանք շատ են դուր գալիս Հռոմի պապ Գրիգորիս 16-րդին, հատկապես՝ «Քաոս. աշխարհի արարումը», որը հեղինակը նվիրում է նրան: Հետագայում Պապը այն հանձնում է Մխիթարյան միաբանությանը, իսկ նկարչի 200-ամյակին կտավը հանգրվանում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

Առավել հայտնի են Այվազովսկու ծովանկարները, և նրան համարում են աշխարհի խոշորագույն ծովանկարիչներից մեկը: Անչափ բեղմնավոր էր նրա վրձինը, նա ստեղծել է ավելի քան 6000 կտավ: Նրա արագ նկարելու մասին շատ պատմություններ կան, ընդ որում՝ ավելի շատ նկարում էր հիշողությամբ:

Միջոցառման ընթացքում իրենց տպավորությունները ներկայացրին կերպարվեստի բաժնի ուսանողները, որոնք հոկտեմբեր ամսին համալսարանի միջոցներով հնարավորություն էին ստացել Հայաստանի ազգային պատկերասրահում դիտելու Այվազովսկու գործերը:

«Երբ իմ աչքերով տեսա «Քաոս»-ը և Այվազովսկու մյուս գլուխգործոցները, ես նորից ոգևորվեցի և հասկացա, որ ընդհանրապես չպետք է հուսահատվել: Արտակարգ հետաքրքիր են Այվազովսկու «Նավաբեկություն»-ները՝ իրենց գունային լուծմամբ և կոմպոզիցիոն կառուցվածքով: Նրանցում պատկերված են ծովի անսահման տարերքի դեմ մաքառող միայնակ նավերը, միայնակ մարդը կամ մարդկանց խմբեր: Այվազովսկին միշտ որևէ հնարքով՝ լույսի մի շողով, ծիածանի պատկերումով շեշտում է հույսի գաղափարը: Նրա արվեստում լույսը կյանքի, հույսի ու հավատի խորհրդանիշ է: Հենց սա պետք է սովորենք Այվազովսկուց»,-ասաց ուսանող Գեղամ Բաբայանը:

«Այն առաջարկը, որ ստացանք հոկտեմբեր ամսին, բխում էր յուրաքանչյուր երիտասարդ նկարչի կարիքներից՝ տեսնել Այվազովսկու ցուցահանդեսը: Լույսի ներկայությունը խիստ կարևոր է Այվազովսկու համար: Ուշադիր դիտողը կզգա, որ պատկերելով ալիքներ, ամպեր ու օդային տարածություն՝ նա առավելապես լույսն է շեշտում: Ցուցահանդեսում ներկայացված էին 80-ից ավելի աշխատանքներ, որոնք սկսվում էին լուցկու տուփի չափից: Եվ զարմանում էինք, թե ինչպես կարելի է աշխատել այդքան տարբեր չափերի մեջ: Հետո հասկանում էինք, որ գաղտնիքը ծովանկարչի հանճարեղության մեջ է: Քանի որ նա վաղուց ճանաչում, կրքոտ սիրում էր ծովը, գիտեր նրա շարժման գաղտնիքները, աշխատելիս օգտվում էր հիշողության նատուրայից: Նա չձերբազատվեց ակադեմիական նկարչությանը հատուկ կանոններից, բայց հասավ իրականության կենդանի ընկալման: Շրջելով սրահներով՝ մենք զգում էին նրանից եկող լույսը: Այվազովսկու «Քաոս»-ը..., հեռվում դիտելիս ինձ թվում էր, թե ծովի այդ մասը, երկինքը, ամպերը կտրել և մտցրել են շրջանակի մեջ: Եվ ահա ուր որ է՝ քաոսը կտեղափոխվի պատկերասրահ: Բայց երբ մոտեցա կտավին, տեսա հստակ վրձնահարվածները, նորից համոզվեցի, որ դա մարդու ձեռքով ստեղծված աշխատանք է, և որ միայն հանճարն է ի զորու բնությունն այդպես վարպետորեն տեղափոխել կտավի վրա: Կոմպոզիցիայի կենտրոնում խենթացած ալիքներն են, երկնքի սևակնած ամպերի կենտրոնում՝ լուսավոր բաց գույների մեջ Արարարիչն է երևում և լույս է բերում աշխարհին: Անասահման տպավորություն և էներգիա. ահա մեր ձեռքբերումներն այդ ցուցահանդեսից»,- իր տպավորությունները ներկայացրեց մագիստրոս Սյուզի Բաղդասարյանը:

«Ամբողջ ճանապարհին աչքերիս առջև մեկը մյուսի հետևից անցնում էին աշխարհակալ նկարչի ծանոթ նկարները, և սիրտս արագ բաբախում էր այն մտքից,



որ շուտով տեսնելու եմ բնօրինակները: Հասավ երանելի պահը: Մենք ազգային պատկերասրահի մուտքի առջև ենք: Մի քանի քայլ, և ասես հրաշքների աշխարհում ենք. սա մի ուրիշ աշխարհ է, գույների խաղ, որը մի տեղ վերածվել է փոթորկի և այն այնքան իրական է, որ ականջներիդ են հասնում ջրերի սանձարձակ շառաչը և մարդկանց վայնասունը, ովքեր ինչ-որ ձևով ուզում են փրկվել արհավիրքից: Մի ուրիշ կտավում կապույտի գունախաղն է: Մի՞թե կապույտն այդքան երանգներ ունի: Կտավներն ասում են՝ այո, ունի: Երբ նայում ես այս հրաշքներին, հասկանում ես, որ դրանց հեղինակը, ինչպես Թումանյանն է ասել, կախարդ ծերունի է, որն իր կախարդական վրձնով կանգնեցրել է ահարկու փաթորիկները: Մեծ ծովանկարչի նկարներն են, որոնց նայելով հասկանում ես, որ նրանց ժամանակաշրջանը երբեք չի ավարտվում: Այդ կտավները դարերի, հազարմյակների համար են արված: Հպարտ եմ, որ ունենք Հովհաննես Այվազովսկու պես հսկայի, որ ամբողջ աշխարհում միակն է իր բարձր գործերով»,- սա էլ ուսանող Խորեն Իսրայելյանն է խոսում:

Հայկական թեմատիկան մեծ տեղ է գրավում Այվազովսկու ստեղծագործություններում: Նա միշտ մտահոգված է եղել մեր ժողովրդի ճակատագրով և իր ապրումներն արտահայտել է նկարների միջոցով: Հայաստանի նկատմամբ Այվազովսկու տածած սերն արտահայտվել է «Արարատ», «Հայ մարտիկի երդումը», «Հայ ժողովրդի մկրտությունը», «Բայրոնի այցը Մխիթարյաններին՝ Սուրբ Ղազար կղզում», «Խրիմյան հայրիկը էջմիածնի շրջակայքում», «Նոյն իջնում է Արարատից» և այլ կտավներում: Իր ճանապարհորդությունների ընթացքում բազմաթիվ հանդիպումներ է ունեցել հայության լայն զանգվածների հետ, օգնել ազգային կազմակերպություններին՝ դպրոցներին, նվիրել նկարներ, բացել ցուցահանդեսներ: Փայփայել է այն երազանքը, թե կկարողանա մեկ ընդհանուր միության մեջ միավորել տարբեր երկրներում ապրող հայ նկարիչներին և զարկ տալ կերպարվեստի զարգացմանը:

Մեծ արվեստագետն իր վերաբերմունքն է արտահայտել նաև հայկական կոտորածների նկատմամբ: 1890-ական թթ. հայկական կոտորածների ծանր օրերին նա ստեղծեց «Հայերի ջարդը Տրապիզոնում», «Թուրքական նավերը ծովն են թափում հայերին» և այլ աշխատանքներ՝ իր ցասումն արտահայտելով թուրք մարդասպանների դեմ: Այդ նկարները նա չի վաճառել, ամեն ցուցահանդեսի ժամանակ ցուցադրել է, դրել այնպիսի տեղ, որ առաջինն այդ նկարները երևան՝ իր բողոքն աշխարհին այդպես է ներկայացրել նկարիչը: Իսկ մահից առաջ, որը վրա է հասել հանկարծակի, նա վրձնում էր «Թուրքական նավի խորտակումը» նկարը:

ԱրՊՀ կերպարվեստի բաժնի դասախոս Ալեքսանդր Գասպարյանը խոսեց Այվազովսկու ստեղծագործությունների ժանրային կառուցվածքի, ոճի, թեմատիկայի, ստեղծագործական մեթոդի, նրա ազգային պատկանելության յուրահատկությունների մասին:

Պետերբուրգի, Հռոմի, Ֆլորենցիայի, Շտուտգարտի, Ամստերդամի, Փարիզի գեղարվեստի ակադեմիաների, ռուսական աշխարհագրական ընկերության, Ռուսաստանի կայսերական ակադեմիայի անդամ, ռուսական կայսրության պատվավոր ծովակալ Հովհաննես Այվազովսկին գերադասում էր ապրել և աշխատել իր ծննդավայր Թեոդոսիայում, որտեղ էլ այսօր պահպանվում է նրա տուն-թանգարանը:

Մահացել է 82 տարեկան հասակում՝ 1900թ. մայիսի 2-ին:

Իր կտակի համաձայն նրան թաղել են Թեոդոսիայի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցու բակում: Նրա շիրմաքարին գրաբար փորագրված է պատմահայր Մովսես Խորենացու խոսքը. «Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող»:

Միջոցառման վերջում Լ. Ղալայանը ցուցադրեց իր գործերի շարքը, որ նվիրել է մեր մեծ հայրենակցին՝ ասելով. «Իսկ ես՝ որպես այսօրվա նկարիչ, մեր Արցախի գետերն եմ նկարել, որ գնան հասնեն Այվազովսկու ծովին»:

Ասվածին հավելենք, որ նոյեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում գումարվել է «Հովհաննես Այվազովսկի-200» գիտական նստաշրջանը, որի մասին տեղեկանում ենք ՀՀ ԳԱԱ «Գիտություն» պաշտոնաթերթից: Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջան՝ 12 զեկուցումով, նվիրվեց մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը: Գիտական նստաշրջանին ընդառաջ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի «Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատությունը: Գիտական նստաշրջանում եղան հայտնություններ, նորություններ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԹՈԴՓՈՒՆՋ

ԱՊԱԳԱՅԻ ԼՈՒՅՍՈՎ ԼԵՑՈՒՆ

Ինչպես ասել է մեծ մտածողներից մեկը, ուսուցիչը ապրում է այնքան ժամանակ, որքան ինքը դեռևս սովորում է. Հենց որ նա դադարում է սովորել, նրա մեջ մահանում է ուսուցիչը:

Երբ ուսուցիչը զուգակցում է սովորելու և սովորեցնելու կարողությունները, դրանից միայն շահում է մատաղ սերունդը: Մանավանդ այն սերունդը, ով ճակատագրի պարտադրանքով սահմանամերձ գոտում է ապրում, և իրավիճակը լարվելու դեպքում առաջինն է հարվածն իր վրա վերցնում:

Երբ Ուղտասար մտանք, մեր ուշադրությունն առաջինը գրավեց կիսակառույց մի շենք, որ, ինչպես պարզվեց, նոր դպրոցն է լինելու (շատ ուրախալի փաստ է):

Դպրոցում ընդօրինակման դասեր էին նախատեսված գրականությունից (9-րդ դասարան)՝ երիտասարդ ուսուցչուհի Տաթև Մեսրոպյանի և ռուսաց լեզվից (4-րդ դասարան)՝ Գայանե Սարկիսովայի մոտ: Գրականության դասի թեման «Սասնա ծռեր» էպոսի «Սասունցի Դավիթ» ճյուղն էր:

Առաջին իսկ պահից ունկնդիրներին գրավեց դասասենյակի կահավորվածությունը, որի համար ուսուցչուհին զգալի աշխատանք էր կատարել: Ամեն ինչ թեմատիկ բնույթ էր կրում՝ բովանդակությունն ու գաղափարը նրբորեն միահյուսող:

Դասի գլխավոր նպատակը՝ վիպական կերպարի միջոցով ընկալել տալ հայ ժողովրդի վեհ գաղափարները, իղձերը և լավատեսությունը, ավելին էր, քան նախատեսված էր: Ուսուցչուհու՝ աշակերտներին տրամադրած լրացուցիչ նյութերը նպաստեցին, որ նրանք լավագույնս դրսևորեն իրենց գիտելիքները: Էպոսի գաղափարական հատկանիշներից, կերպարները բնութագրող հատվածներից բացի, գիտեն Երևանի կայարանամերձ հրապարակում վեր խոյացող Սասունցի Դավթի հսկա արձանի տեղադրման, հեղինակի՝ Երվանդ Քոչարի բանտարկության, արձանի տեղահանման և կրկին տեղադրման պատմությունները, մեկնաբանում են «ձիու հայացքն ուղղված է դեպի մեր «բարեկամ» Թուրքիան» մտքի այլաբանական իմաստը: Գիտեն նաև, որ ձիու ոտքերից մեկի տակ դրված բաժակը խորհրդանշում է հայ ժողովրդի համբերությունը, և ուսուցչուհու այն հարցին, թե արդյոք լցվե՞լ է հայ ժողովրդի համբերության բաժակը, նրանք ունեին իրենց հրաշալի պատասխանները. այո՛, լցվել է, և այն արտահայտվել է Արցախյան հերոսամարտով, որն առայսօր շարունակվում է, ու մեր պայքարն ու մաքառումները կդադարեն միայն այն դեպքում, եթե վերականգնվի պատմական ճշմարտությունը: Աշակերտների սակավաթիվ լինելու հանգամանքը չխանգարեց ուսուցչուհուն՝ կատարելու այդ դասին նախատեսած աշխատանքը: Տարբեր մեթոդներ կիրառելով՝ նա ապահովեց դասի ամբողջականությունը: Հայրենասիրական ոգին ուղղակի թևածում էր դասարանում: Իսկ իններորդցիներ Մարիայի ու Անահիտի արտահայտիչ ու ծավալուն ասմունքը էպոսից ավելի ևս բացահայտեց Սասունցի Դավթի ու Խանդութի հերոսական կերպարները: Բանավոր հարցմանն ու գրավոր հանձնարարություններին ներգրավվեց նաև ներառական կրթությամբ Արմեն Ծատուրյանը, որի պատասխանները բավարարեցին բոլորիս:

Ակնհայտ էր, որ նախնիների սխրանքներով ոգևորված սերունդ է մեծանում՝ նրանց արժանի ու նրանցով հպարտ:

Աշակերտները սիրով ու հաճույքով լրացրին էպոսի կերպարներին վերաբերող խաչբառը, կառուցեցին տոհմածառը՝ տեղադրելով Սասնա ծռերին, պարզաբանելով ժողովրդի՝ իր սիրելի հերոսներին տված մակդիրները և այն դարձվածքները, որ իմաստուն ժողովուրդը ստեղծել է՝ նրանց մեջ խտացնելով իր փորձն ու իմաստությունը:

Քննարկմանը մասնակցող ուսուցիչները դրվատանքի խոսք հնչեցրին երիտասարդ ուսուցչուհու վարած դասի հաջողվածության, մեծ պատասխանատվության, դժվարություններից չխուսափելու նրա հզոր կամքի, փոքրաթիվ դասարանում ընդգրկուն գործունեություն ծավալելու մասին: Կարևորեցին առանձնապես գրականության ուսուցչի դերն այսօրվա սերնդի դաստիարակության հարցում, որի ուսերին բարդ ու դժվարին, սակայն ազգանվեր ծանր բեռ է դրված: Խոստումնալից ապագա ունեցող ուսուցչուհի Տաթև Մեսրոպյանը սիրով լսեց փորձառու ուսուցիչների գնահատականներն ու խորհուրդները՝ հետագայում ևս ավելի հաջողված դասեր վարելու խոստումով:

Ռուսաց լեզվից դասը կազմակերպվեց 4-րդ դասարանում՝ փորձառու ուսուցչուհի Գայանե Սարկիսովայի մոտ: Թեման էր՝ «Ձմեռ»: Առաջին իսկ վայրկյանից ունկնդիրների հոգիները պարուրեցին համաշխարհային մեծություն Վիվալդիի դասական երաժշտությունն ու համակարգչով ցուցադրվող ձմեռային կախարդիչ տեսարանները՝ ձմռան բազմաշնորհ ստեղծագործություններով: Այնուհետև երեխաները ներկայացրին իրենց նկարները՝ ձմեռային հեքիաթներով՝ յուրատիպ լուծումներով: Նրանք բնութագրեցին տարվա իրենց սիրելի եղանակը՝ իր բոլոր դրսևորումներով:

Ուսուցչուհու ներկայացրած հանելուկներից էլ ճանաչեցին անտառաբնակներին, լրացրին խաչբառը, բնութագրեցին կենդանիներին ու պատմեցին, թե նրանցից որն ինչպես է նախապատրաստվում ձմռանը: Հետո դերերով ներկայացրին ձմեռային մի գեղեցիկ հեքիաթ: Երեխաների պակասը չխանգարեց գեղեցիկ ավարտի հասցնելու հեքիաթը (նույն երեխան ընթացքում փոխում էր իր դերը):

Հմուտ մանկավարժի բարեհամբույր վերաբերմունքը քաջալերում էր երեխաներին, որոնք անկաշկանդ բնութագրում էին ձմեռը, կազմում բառակապակցություններ, ընթերցում բանաստեղծությունը՝ առոգանության տարբեր նշաններով, երգում ձմռանը նվիրված երգը:

Գործընկերները քննարկման ընթացքում նշեցին այն հսկայական աշխատանքը, որ ուսուցչուհուն հաջողվեց անել մի դասաժամի. սովորողների խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում, գեղագիտական ճաշակի ձևավորում և այլն: Նման անձուկ պայմաններում ուսուցչի անձնվեր աշխատանքը ինքնին հայրենասիրության դրսևորում է, քանզի նա է սովորողների հոգում ներարկում այն խոր ու լուսավոր հավատը, որ նրանց ուղղորդում է դեպի ապագան: Նա է այդ հավատն անխաթար պահող զորեղ ուժը, դասը գրավիչ դարձնողը, մանկան հետ մանկացողը, լուսավոր երազանքների երաշխավորն ու պահապանը:

Ցավոք, մի հանգամանք դառնացրեց բոլորի հոգին. երկու դասերը և կազմակերպված միջոցառումը՝ նվիրված 1988-ի Սպիտակի երկրաշարժի 29-րդ տարելիցին, տեղի ունեցան նույն դասարանում (եթե, իհարկե, կարելի է այդպես անվանել): Միջոցառման մասնակից երեխաները՝ անմեղ զոհերի անսահման ցավն ու կսկիծը ամբարած հոգում, մոմավառությամբ, սրտահույզ արտասանությամբ հարգեցին նրանց հիշատակը:

Կրթության բաժնի պաշտոնակատար Կառլեն Մայիլյանը, ներկա լինելով միջոցառումներին, նշեց, որ եղած անհարմարությունները ի զորու չեղան խանգարելու ուսուցիչների հայրենանվեր գործին: Նրանց արածն, իրոք, հայրենասիրությունից վեր է:

Վերջում դպրոցի տնօրեն Վոլոդյա Հակոբջանյանը չթաքցրեց, որ իր կոլեկտիվի գործունեությունը հպարտանալու առիթ է տալիս իրեն, քանի որ ամենօրյա ջանադիր աշխատանքով են ուսուցիչները հասել այսօրվան:

Ողջ օրվա ընթացքում ներկաներս ո՛չ դպրոցականների և ո՛չ ուսուցիչների դեմքին դժգոհության ու տրտունջի ոչ մի նշույլ չնշմարեցինք: Ընդհակառակը, բոլորի սրտերը վառվում էին այն լուսավոր հավատով, որ եկող՝ 2018-2019 ուսումնական տարին սկսելու են նորաբաց դպրոցական շենքում:

Տա Աստված, որ ոչինչ չխաթարի այդ հավատը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՄԱՆՈՐԸ ԳԵՏԱՎԱՆՈՒՄ

Գետավանում Նոր տարվա հրաշքին սպասում են և՛ փոքրերը, և՛ մեծերը: Դպրոցում կազմակերպված ամանորյա հանդեսին ներկա էին համայնքի գրեթե բոլոր ընտանիքների անդամներ: Այդպես միասնական տոն նշելը համայնքում ձևավորված գեղեցիկ ավանդույթներից է:

Հանդեսին ընդգրկված էին դպրոցի բոլոր դասարանները: Նրանց հետ համապատասխան աշխատանք են տարել դասվար Իրինա Ազարյանը, դպրոցի կազմակերպիչ Սմելա Սարգսյանը, դասղեկ Մանուշակ Գրիգորյանը՝ դպրոցի տնօրինության աջակցությամբ: Միջոցառումը վարեց Ի. Ազարյանը:

Հանդեսը սկսվեց 2-4-րդ և 6-րդ դասարանցիների բեմադրած ձմռան հեքիաթով: Այդտեղ էին անտառի բնակիչները, եկան նաև Ձմեռ պապն ու Ձյունանուշը (դպրոցի աշակերտներ Ալեքս Պետրոսյան, Վերա Սարգսյան): Սկսվեց ուրախ ու զվարթ տեսարանը: Երեխաները երգեցին, պարեցին, արտասանեցին, իրենց ցանկությունները հայտնեցին և Ձմեռ պապից նվերներ ստացան: Միջոցառումը նույն ոգով շարունակեցին բարձր դասարանցիները:

Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ հանդեսի մասնակիցներին, գյուղի ողջ բնակչությանը շնորհավորեցին համայնքի ղեկավար Արարատ Զաքարյանը, դպրոցի տնօրեն Ռոզա Գրիգորյանը, ծնող Արման Գասպարյանը: Նրանց բարեմաղթանքների ամփոփ բովանդակությունն է՝ խաղաղություն, առողջություն, հաջողություններ, գյուղի ու երկրի բարգավաճում, մեր երկրի հզորացում:

Բոլորն իրենց երախտագիտությունը հայտնեցին հանդեսի կազմակերպիչներին՝ ամանորյա տոն պարգևելու, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների ծառայության պետ Կարեն Սարգսյանին՝ նվերների համար:

Հանդեսն ավարտվեց համայնքի ղեկավարի անակնկալով՝ հրավառությամբ:

Թող Ամանորի և Սուրբ Ծննդի պայծառ լույսերով շողան բոլորի օջախները:

Վարդուհի ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Ծնող
գ. Գետավան

Խոսք հիշատակի

ՀԱՅԿՈՒՇ ԱՐԱՐԱՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Կան մարդիկ, որոնք ասուպի պես բոցկլտում են երկնքում և անհետանում՝ իրենց հետևից թողնելով անջնջելի հետագիծ, ում մասին խոսում են ակնածանքով, հիացմունքով և հպարտությամբ: Այդ երանելիներից մեկն էր Հայկուշ Արարատի Միրզոյանը, որի ապրած կյանքը մի յուրօրինակ դաս է մատաղ սերնդի համար, մաքառելու, ապրելու, պայքարելու, արարելու մի անմոռանալի դաս...

Հայկուշ Միրզոյանը ծնվել է Մարտունու շրջանի Աշան գյուղում 1963թ. սեպտեմբերի 26-ին, Արարատ և Համեստ Վարդանյանների ընտանիքում: Ընտանիքի առաջնեկն էր, ուներ քույր ու եղբայր: Միջնակարգ կրթությունն ստացել է Աշանի դպրոցում, այնուհետև 1981-ից կրթությունը շարունակել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում՝ և՛ դպրոցը, և՛ բուհն ավարտելով գերազանցությամբ: Մերժելով Երևանում մնալու բոլոր գայթակղիչ առաջարկները՝ ապագա ամուսնու՝ Սամվել Միրզոյանի հետ վերադարձել է հայրենի Արցախ, ամուսնացել՝ լույս աշխարհ բերելով երեք դուստրերին:

Մանկավարժական գործունեությունը սկսել է Սառնաղբյուրի ութամյա դպրոցում, որտեղ աշխատում էր որպես ֆիզիկայի ուսուցչուհի: Այնուհետև տեղափոխվել է Խնձրիստանի միջնակարգ դպրոց: 1989 թվականի սեպտեմբերից աշխատում էր Նախիջևանիկի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցչուհի: Եղել է նաև դասվար:

Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, թշնամին գրավեց և ավերեց Վարդաձոր և հարակից գյուղերը: Հայկուշ Միրզոյանը ընտանիքի հետ տեղափոխվեց Ստեփանակերտ: Սակայն ցուրտ ու մութ տարիները չկոտրեցին նրան: Նա այն հերոս ուսուցիչներից էր, որոնք իրենց կոչմանը հավատարիմ մնալով, արհամարհելով թշնամու ռմբակոծիչ ինքնաթիռների մահաբեր ձայները, արկերի պայթյունները, ամեն օր Ստեփանակերտից ոտքով գնում էին Մալիբեկլու (այժմ՝ Աջափնյակ) գյուղը, այնտեղ բացված Նախիջևանիկի միջնակարգ դպրոցում դասավանդելու: Հենց նրա ու նրա նմանների անկոտրում կամքի շնորհիվ պահպանվեց դպրոցը:

Գյուղն ազատագրելուց հետո առաջիններից մեկն էր, որ վերադարձավ և իր ողջ էությամբ, ուժով նվիրվեց մատաղ սերնդի կրթության գործին: Նա իսկական հայ կնոջ կերպար էր, որը կյանքի բոլոր փորձություններին դիմակայեց ամուսնու հետ թիկունք թիկունքի տված, մեծացրեց երեք դուստրերին՝ բոլորին տալով բարձրագույն կրթություն:

2012 թվականից նա Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի փոխտնօրենն էր և իր խորհուրդներով միշտ օգնում էր բոլորին: Մանկավարժական և մեթոդական բարձր պատրաստվածությամբ, բազմակողմանի զարգացած, բազմափորձ ուսուցչուհին իր վաստակի համար ԼՂՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Հայկուշ Միրզոյանը բարոյական վեհ արժանիքներով օժտված մեծատառով մարդ էր, որը վայելում էր գործընկերների, աշակերտների և ողջ հասարակության հարգանքը:

Շուրջ 12 տարի նա անտրտունջ պայքարում էր իրեն բաժին հասած վերջին փորձության՝ ծանր հիվանդության դեմ՝ շարունակելով իր հայրենանվեր գործը: Երբեք չէր ընկրկում դաժան հիվանդության առաջ, չէր վհատվում, միշտ լավատես էր և սովորեցնում էր բոլորին պայքարել ամեն ինչի՝ անգամ մահվան դեմ:

Բայց, ավա՜ղ, բազում փորձություններից պատվով դուրս եկած ուսուցչուհին այս անգամ, ինչպես ինքն էր ասում, չկարողացավ հաղթել Գաբրիել հրեշտակին:

Ասում են՝ Աստված լավերին միշտ իր մոտ է տանում... 2017թ. դեկտեմբերի 18-ին դաժան մահը խլեց կյանքի 54-րդ գարունը բոլորած հոգատար մոր, անկրկնելի տատիկի, հիանալի կնոջ... մեծատառով մարդու կյանքը:

Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի ողջ կոլեկտիվը, Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժինը սգում են սիրելի գործընկերոջ վաղաժամ մահը, կիսում կորստյան ցավը, վշտակցում հարազատներին:

Նրա անունը միշտ վառ կմնա գործընկերների, սաների, առհասարակ բոլոր ճանաչողների սրտերում:

Նախիջևանիկի միջնակարգ
դպրոցի կոլեկտիվ
Ասկերանի կրթության և սպորտի բաժին

ՏԱՐԵՄՈՒՏ

ԼԻՆԻ ԲԵՐԿՐԱՆՔԻ, ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԻ

Դեկտեմբերի 22-ին Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում տոնական եռուզեռ էր: 5-րդ «բ» դասարանի անգլերենի ուսուցչուհի Նելլի Ասլանյանը կազմակերպել էր Ամանորին նվիրված դաս-միջոցառում: Դպրոցի դահլիճը զարդարված էր օրվա խորհրդին համահունչ: Ամենուր գույնզգույն փուչիկներ, գունագեղ շղթաներ, իսկ կենտրոնում արքայավայել կանգնել էր տոնածառը՝ ծանրաբեռնված փայլփլուն խաղալիքներով...

Միջոցառմանը ներկա էին դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ:

Բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ Նելլի Ասլանյանը.

- Շուտով ևս մեկ տարի կգլորվի հիշողության գիրկը՝ իր հետ տանելով ժամանակի տխուր պահերը և մեզ թողնելով այն բոլոր երջանիկ ակնթարթներն ու հաջողությունները, որ ունեցանք այս տարում: Թող գալիք տարին լինի գեղեցիկը տեսնելու և գնահատելու, համերաշխության, սիրո և խաղաղության տարի: Թող իրականանան բոլորիս երազանքները, և թող բոլոր դժվարություններն ու հոգսերը մնան ետևում:

Հինգերորդ դասարանցիները հայերենով, անգլերենով և ռուսերենով շնորհավորեցին ներկաների Ամանորը, մաղթանքներ հղեցին ծնողներին, ուսուցիչներին: Մեր երկրի սահմանին կանգնած զինվորին հայտնեցին հատուկ շնորհակալություն. հենց նրա շնորհիվ է ամուր և անառիկ մեր սահմանը: Դպրոցականները հանդես էին գալիս մեծ ոգևորությամբ: Նրանց ուրախ երգն ու պարը հիացմունքի ալիք էին բարձրացնում դահլիճում: Միջոցառումն ուղեկցվում էր տեսանյութով, որը ներկայացնում էր, թե ինչպես են անցնում անգլերենի դասաժամերը: Երեխաների մաքուր անգլերենը վկայում էր ուսուցչուհու պատասխանատու և նվիրական աշխատանքի մասին:

Ուսուցչուհին անցկացրեց նաև խաղ-մրցույթ, հաղթող աշակերտները նրա կողմից ստացան նվերներ:

Հինգերորդ դասարանցիների հանդեսից հետո կրտսեր դպրոցականները ևս ներկայացան ելույթներով: Ամեն մի կատարում յուրովի գեղեցիկ ու հրաշալի էր: Ժպիտը, ծիծաղը, ջերմությունն ու լուսավոր երազանքներն էին թևածում դահլիճում: Ուսուցիչներն ու ծնողները պարուրվել էին ամանորյա տրամադրությամբ և սիրով: Յուրաքանչյուրը սրտի խորքում խաղաղություն և բարօրություն էր երազում Արցախ աշխարհին:

Դաս-միջոցառումը կազմակերպվել էր մեծ սիրով և պատշաճ մակարդակով: Բոլորը երջանիկ ու գոհ էին, առանձնապես՝ դպրոցականները, որոնք ստացան ամանորյա իրենց նվերները:

Թող Արցախ աշխարհում հնչեն միայն խաղաղություն ավետող զանգի ղողանջներ: Լինի բերքի, բարիքի, լիության, բարեկեցության տարի...

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

ԱՄԱՆՈՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Մարդուն հատուկ է ուրախ, գեղեցիկ կյանքի ձգտումը: Երեխաները, ինչու չէ, նաև մեծահասակները, չեն ուզում ապրել առանց տոնի: Մարդ պետք է ուրախանա այն ամենով, ինչի հնարավորություն տալիս է կյանքը՝ շփվելու հարազատների, ընկերների, կենդանական ու բուսական աշխարհի հետ և ուրախություն պարգևելու շրջապատին: Տոները հնարավորություն են տալիս մարդու ներաշխարհը փոփոխության ենթարկել՝ լինել բարի, շռայլ, նախաձեռնող ու կամեցող: Ահա թե ինչու երեխաների կյանքը պետք է լցնել տոներով, նրանց պարգևել դրանցով ապրելու բերկրանք:

Այս օրերին Արցախի Հանրապետության կրթօջախներում տոնական տրամադրությունն է թևածում, և անկախ տարիքից՝ բոլորը կարծես սպասում են ամանորյա հրաշքի, իսկ փոքրերը հավատում են իրենց բնակարանները Ձմեռ պապիկի ծխնելույզով այցին:

Քերթի Կ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի նախապատրաստական խմբի սանիկները մի անսովոր սպասումով անցկացրին իրենց ամանորյա հանդեսը: Նրանք այնպիսի ոգևորությամբ էին նախապատրաստվում, կարծես ուզում էին ասել, որ իրենք են հանդեսի իրական տերերը: Ուրախ ժպիտներն ու աշխուժությունը, նրանց անհամբեր սպասումը Ձմեռ պապին անվերջանալի էր թվում: Եվ հանկարծ հայտնվում է շատ սպասված հյուրը: Նրանք երգեցին և ասմունքեցին Ձմեռ պապի համար, պարեցին տոնածառի շուրջը՝ ստանալով իրենց նվերները: Տոնական տրամադրությունը փոխանցվում է ծնողներին, ուսուցիչներին:

Արցախ աշխարհում թող խաղաղությունը թևածի, 2018թ. բոլոր օրերը հաջողությամբ պսակվեն:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ
Քերթի Կ.Հակոբյանի անվան միջն. դպրոցի նախապատրաստական խմբի դաստիարակ

ԱՄԱՆՈՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Տարբեր երկրներում Ամանորը նշվում է յուրովի, սակայն նրանց ընդհանրացնում է այն, որ մարդիկ ամեն տեղ Նոր տարին դիմավորում են նոր հույսերով ու սպասելիքներով, ցանկություններ են պահում, նվերներ մատուցում, իսկ երեխաները սպասում են Ձմեռ պապին, որին ամեն ժողովուրդ տարբեր անուններ է տալիս:

Հին հայերի նավասարդյան Ամանորը նշվել է օգոստոսի 11-ին: Այն 12-րդ դարում ընդունել է տոմարագետ Հովի. Սարկավագը: Հայկական ավանդական Ամանորը յոթնօրյա բացօթյա տոնակատարությամբ նշվել է Նպատ լեռան ստորոտում՝ արքունիքի, աշխարհազորի ներկայությամբ: Տոնի գլխավոր ծիսական արարողությունը լեռան գագաթին մեկամյա կենդանու զոհաբերությունն էր (հիմնականում՝ եղջերու) և ծիսական կերակուր եփելը (զոհաբերած կենդանու մսով հարիսա): Հեթանոս հայերի ամանորյա այս տոնակատարությունը շարունակվել է նաև քրիստոնեության վաղ շրջանում:

Բուլղարիայում ավանդույթի համաձայն՝ Նոր տարին դիմավորում են տանը: Տոնակատարության սկզբում տան կրտսերը կանգնում է տոնածառի մոտ և երգում, իսկ մեծահասակները նրան նվերներ են մատուցում: Սակայն ամենահետաքրքիրը սկսվում է ժամը 00:00-ին հնչող ղողանջներից հետո, երբ տանտիրուհին սկսում է կտրատել ամանորյա անակնկալ-կարկանդակը: Եթե մեկին կարկանդակի միջից բաժին է հասնում մետաղադրամ, դա նշանակում է, որ այն կբերի հարստություն, իսկ չամուսնացածներին բաժին ընկած վարդի ճյուղը՝ սեր:

Դանիացիները կեսգիշերին սեղանին են դնում բրնձե քաղցր շիլա, որի առանձնահատկությունն այն է, որ այնտեղ թաքցված է ընկույզ կամ նուշ: Այս ավանդույթը հատկապես դուր է գալիս չամուսնացած աղջիկներին: Եթե նրանցից որևէ մեկին բաժին հասնի ընկույզ, ապա Նոր տարում ամուսնությունից խուսափել չի լինի:

Մեծ Բրիտանիայում նվերները պատվիրում են «Father Christmas»-ին (բառացի նշանակում է՝ Ծննդյան Հայր): Նրան գրում են նամակ՝ մանրամասն թվարկելով և բացատրելով, թե ինչ են ցանկանում: Նամակն այնուհետև գցում են բուխարու մեջ: Ծխնելույզից դուրս եկող ծուխը ճիշտ տեղը կհասցնի ուղարկված նամակը:

Իտալիայում անցնող տարվա վերջին օրը բոլոր պատուհաններից դուրս են թափում անպիտան իրերը: Իտալացիները նախընտրում են Նոր տարի մտնել ոչ միայն տան նորացված հարդարանքով, այլև նոր հագուկապով: Սակայն իտալական հին ավանդույթն այլ է. դեկտեմբերի 31-ին տղամարդիկ և կանայք հարազատներին նվիրում են կարմիր գույնի ներքնազգեստ: Հենց այդ գույնն է խորհրդանշում նորությունը: Իսկ փոքրիկ իտալացիները նվերներ են սպասում Ձմեռ պապի կնոջից՝ Լա Բեֆանայից:

Գերմանիայում Սուրբ Ծնունդը ընտանեկան տոն է: Բոլորը պետք է հավաքվեն տոնական սեղանի շուրջը: Այդ օրը տեղի ունեցող նվերների փոխանակման արարողությունը կոչվում է Բեշերունգ: Ամանորի ճաշկերույթի ամենակարևոր մասը կոչվում է «der Lebekuchen»՝ մեղրաբլիթ-քաղցրաբլիթ:

Ճապոնիայում, ըստ ավանդույթի, Ամանորից առաջ միմյանց նվիրում են բացիկներ այն կենդանու պատկերով, որի տարին է լինելու: Սակայն ճապոնական տան հիմնական զարդարանքը «կադմոնացու»-ն է (ելքի մոտի սոճի): «Կադմոնացու»-ն յուրօրինակ ողջույն է Նոր տարվա սրբին: Սովորաբար այն պատրաստում են սոճուց, բամբուկից և բրնձի հյուսված ցողուններից:

Ֆրանսիայում մարդիկ կարող են նվիրել միմյանց ամեն ինչ՝ չնայած կան որոշակի կանոններ: Օրինակ՝ օծանելիք կարող է նվիրել միայն ամուսինը իր տիկնոջը: Ուրիշ տղամարդուց նմանատիպ նվերը համարվում է «կանոններից դուրս»:

Մարինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հադրութի Ա. Մկրտչյանի անվ. հայրենագիտական թանգարանի փնօրեն, պատմության ուսուցչուհի

ՀՈՒՄՈՐ

Տեսուչի օրագրից

* * *

- Ընկեր Մուրադյան, տանը կանաչ թողթ չի իլալ, պիրիմ յոլկա սարքիմ,- ասաց առաջին դասարանցին:

-է՜, ա խոխա, սոր կանաչ օր չի, սև օրա, տեսուչները ջլամանը տա՞մ յոլկա սարքինք:

* * *

- Յ տառով մի բառ ասա, Աշոտիկ,- ասաց ուսուցչուհին:

- Կարճ յուբկա, - ասաց Աշոտիկը՝ նայելով ուսուցչուհու հագուստին:

* * *

- Մի դարը քանի՞ տարի է,- հարցրեց տեսուչը:

- Պա դասատուն սըվըրցնումա՞, անջախ ամեն որպե ասումա՝ տեսուչին ջլաման չտաք, Նոր տարիս էլ հըրըմցնիք վեչ հա՜,- ասաց չարաճճի Դավիթը:

* * *

- Բալիկս, ասա, բալիկս, նստիր, բալիկս, ապրես,- ուսուցչուհին սիրալիր դիմում է Հարութին:

- Ընկեր, ամեն օր ասումս տուպոյ, ասի, տուպոյ, խոսե, տուպոյ, լսի, տեսնամ էքուց հինչս ըսըլան:

* * *

- Երեխանե՛ր, եկեք խաղանք «Դե, գուշակիր» խաղը,- դիմեց ուսուցչուհին երեխաներին: - Ունի չորս ոտք, երկար…

- Չի, -արագ պատասխանեց աշակերտը՝ չթողնելով, որ նա հարցը ավարտի:

- Ի՞նչ իմացար, բալիկս,- հարցրեց ուսուցչուհին:

- Պա սաղ օրը էտըս ասում, պա հի՞նչ անիմ, վեր գիդամ վուչ:

* * *

- Ես ասիմ, ես ասիմ,- հարցին ուզում էր պատասխանել փոքրիկ Հարութիկը:

-Չէ, պետք չէ,- կոպիտ ասաց ուսուցչուհին: Քիչ հետո՝

- Հա, ասա, Հարութիկ ջան:

- Ասում չըմ, հերթըս հընցալա, մըտաս էլ ընգալա,- հրաժարվեց Հարութիկը:

* * *

- Խոխեք, էքուց տանան էն ճըղպորան, գիվալան-պենան կպիրիք ստոլըս լցնիք, վեր էքուց դասը դիտողական դարձնինք, տեսուչին զարմացնինք:

- է՜, ընկեր, պապին տըվալ չի, ասում ա՝ էդ ջեմի մատերիալ ը՞ք հըվաքում:

* * *

- Բալիկս, ի՞նչ է նշանակում փոխ առնել:

- Ասիմ,- վազ տալավ քինումս հըրեվանին տոռնը թակում:

Գրի առավ Սուսաննա ՀՈՎՍԵՓՅԱՆԸ
ԱՀ ԿԳՄՆ փեսուչ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 30.12.2017թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: